

# ՊԱՏՄԱ-ԹԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼԵՎՈՆ ՉՈՒԳԱԶՅԱՆ  
Արվեստագիտության դոկտոր

## ՀԱՅ ՄԱՆՈՒՐԱԿԱՐԻՉԸ ՄԻՋԱԿԱՐՈՒՄ

Հայ միջնադարյան նկարիչների, մասնավորապես մանրանկարիչների կենսագրության կամ աշխատանքի պայմանների մասին պահպանված տեղեկությունները շատ քիչ են: Բազմաթիվ մանրանկարիչների անունները մեզ առհասարակ չեն հասել: Պատմական հանգամանքների բերումով հայ վարպետները ավելի շատ ձեռագրեր են ծաղկել և քիչ որմնանկարներ, խճանկարներ ու սրբապատկերներ ստեղծել, ուստի, բնականաբար, հայ մանրանկարիչները թվով անհամեմատ ավելի շատ են եղել, քան հայ գեղանկարչության մյուս տեսակները հեղինակողները:

Թեև վերջին հարյուր երեսուն տարիների ընթացքում հարյուրավոր նկարագարդ հայկական ձեռագրեր են ուսումնասիրվել և դրվել գիտական շրջանառության մեջ, բայց, այդուհանդեռձ, դժվար է քիչ թե շատ ճիշտ կերպով ասել՝ քանի մանրանկարիչ է ստեղծագործել միջնադարյան Հայաստանում: Մի քանի տասնամյակ առաջ տպված Պ. Դ'Անկոնայի և Ե. Էշլիմանի հեղինակած Եվրոպայի մանրանկարիչների կենսագրական բառարանը ընդամենը մի հայ վարպետի՝ 15-րդ դարի Սյունիքի գրիչ և ծաղկող Հովհաննեսի անունն էր պարունակում<sup>1</sup>, իսկ Ա. Գևորգյանի վերջերս պատրաստած աշխատությունը ամփոփում է 464 անուն՝ կենսագրական որոշ տեղեկություններով<sup>2</sup>:

Հայ մանրանկարիչների մասին զաղափար են տալիս նրանց նկարագարդած մատյանների հիշատակարանները, երբեմն նաև նրանց աշակերտների, իսկ ավելի սակավ՝ ուսուցիչների թողած հիշատակարանները: Ի տարբերություն արևմտյան իրականության<sup>3</sup>, հայ մատենագիրների երկերում<sup>4</sup>, ինչպես նաև մեկնություններում, վարքագրական հուշարձաններում, բանաստեղծություններում և առհասարակ ողջ հայ գրականության մեջ որպես կանոն նկարիչների, մասնավորապես մանրանկարիչների մասին տեղեկություններ կամ հիշատակություններ գրեթե չեն հանդիպում: Հարկ է նկատել, որ թեև հայերեն նկարագարդ ձեռագրերի թիվը շատ մեծ է, բայց, այդուհանդեռձ, ոչ բոլոր մատյանների նկարագրողների անուններն են մեզ հասել: Հայ մանրանկարիչների համաստեղությունից պահպանված առաջին անունները վերաբերում են 10-րդ դարին:

Անշուշտ հարկ է նկատի առնել, որ դարերի ընթացքում ահոելի քանակությամբ հայկական ձեռագրեր են ոչնչացել օտար նվաճողների ասպատակությունների ժամանակ:

<sup>1</sup> P. D'Ancona et E. Aeschlimann, *Dictionnaire des miniaturistes du moyen age et de la renaissance dans les différentes centres de l'Europe*, Milan, 1949.

<sup>2</sup> Ա. Գևորգյան, Հայ մանրանկարիչներ, Մարթևագիրություն, IX- XIX դդ., Կահիք, 1998:

<sup>3</sup> The Medieval Artist at Work, By V. W. Egbert, Princeton, New Jersey, 1967, p. 19.

<sup>4</sup> Կ. Մաթեոսյան, Հայ մանրանկարիչների հիշարակարանները (Ժ-ԺԵ դդ.): «Սիոն», 1997, հոլիս-դեկտեմբեր, 19: 312:

Հատկապես մեծ են ձեռագրական կորուստները Օսմանյան Թուրքիայի կազմակերպած 1915-1922 թթ. Հայոց ցեղասպանության շրջանում: 989 թ. Էջմիածնի Ավետարանի 6-7-րդ դարերի չորս մանրանկարների քննության առիթով Յ. Ստրժիգովսկին ժամանակին նշել է, որ այդ շրջանում Հայաստանում հայ մանրանկարիչներ չկային, և հավանաբար դրանց է, որ այդ շրջանում Հայաստանում հայ մանրանկարիչներ չկային, և հավանաբար դրանց նեղինակը ասորի է եղել<sup>5</sup>: Յ. Ստրժիգովսկու տեսադաշտից դուրս են մնացել նույն ժամանեղինակը ասորի է եղել<sup>6</sup>: Յ. Ստրժիգովսկու կյանքի օրոք և հետագայում տպված ուսումնամանրանկարների հետ<sup>7</sup>: Յ. Ստրժիգովսկու կյանքի օրոք և հետագայում տպված ուսումնասիրությունները հանգամանորեն ապացուցել են այդ մանրանկարների հայկականությունը: Յ. Ստրժիգովսկին ուշադրություն է դարձնում Տաթևի վանքի 930 թ. որմնանկարների կատարողների մասին հայ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի այն տեղեկությանը, որ այդ վարպետները եկվոր էին, և «օգրաֆ» բառն է օգտագործում նրանց մասին: Այդ տեղեկությունը նաև նույնապես օգտագործում է՝ ասելու համար, որ Հայաստանում այդ ժամանակ նկարները նույնապես օգտագործում է՝ ասելու համար, որ Հայաստանում այդ ժամանակ նկարները, որտեղ նրանք ցույց են տալիս Տաթևի որմնանկարների և արևմտյան որմնանկարների ընդհանրությունները<sup>8</sup>: Արևմտյան վարպետների աշխատելը Տաթևում չի բացառում նրանց կողքին նաև հայերի աշխատելու հանգամանքը: Այդ փաստի օգտին են խոսում Տաթևի որմնանկարների կատարման որոշ առանձնահատկությունները, որոնք տարբերում են այդ պատկերները արևմտյան օրինակներից: Այդ առանձնահատկությունների շարքը կարելի է դասել որմնանկարների ծեփի հաստությունը:

Յ. Ստրժիգովսկու տեսադաշտից դուրս են մնում, որ Տաթևից մի քիչ առաջ հայ վարպետները ծաղկել եմ Մլքեի 862 թ. Ավետարանը /Վենետիկ, Մխիթարյան միաբանության հավաքածու, ձեռ. 1144/86/<sup>8</sup>, ինչպես նաև որմնանկարներով զարդարել Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին /915-922 թթ./<sup>9</sup> և նույն 10-րդ դարի ընթացքում ձևավորել շատ այլ ձեռագրեր, որոնցից առանձին օրինակներ պահպանվել են<sup>10</sup>: Յ. Ստրժիգովսկուն այդ ժամանակ հայտնի չեր, որ հայ վարպետները իրենք էին գնում այլ երկրներ աշխատելու: Այդ մասին են վկայում 5-6-րդ դդ. հայկական խճանկարները Երուսաղեմում<sup>11</sup>, կամ Եգիպտոսի առան-

<sup>5</sup> J. Strzygowski, Das Etchmiadzin Evangeliar, Beiträge zur Geschichte der armenischen, ravennatischen und syro-egyptischen Kunst, Byzantinische Dekmaler I, Vienna, 1891, S.

<sup>6</sup> Л. А. Дурново, Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979, с. 139-154.

<sup>7</sup> N. et M. Thierry, Peintures murales de caractere occidentale en Armenie: eglise S.-Pierre et S.-Paule de Tatev. Byzantion, t. 38, fasc.1, Bruxelles, 1968, p. 180-224; C. C. Манукян, Фрески в Татевском монастыре. В кн.: Памятники культуры, Новые открытия, Ежегодник, 1975, Москва, 1976, с. 131-137.

<sup>8</sup> Sl՛u M. Janashian, Armenian Miniature Painting, Saint-Lazare-Venice, 1966, p. 16-23.

<sup>9</sup> Sl՛u S. Der Nersessian, Church of The Holy Cross, Cambridge, 1965, p. 36-49, fig. 57-70.

<sup>10</sup> Sl՛u S. Der Nersessian, The Date of The Initial Miniatures of the Etchmiadzin Gospel. Etudes Byzantines et Armeniennes-Byzantine and Armenian Studies, Louvain, 1973, p. 533-558; idem, La peinture arménienne au VII siecle et les miniatures de l'Evangile d'Etchmiadzin, p. 525-532; H. und H. Buschhausen, Das Evangeliar Codex 697 der Mechitharisten-Congregation zu Wien, Eine Armenische Prachthandschrift der Jahrtausendwende und ihre spätantiken Vorbilder, Berlin, 1981.

<sup>11</sup> Sl՛u Armenian Art Treasures of Jerusalem, Ed. by B. Narkiss and M. Stone, Jerusalem, 1979, p. 21-28, fig. 32-40.

ձին վաճերի 12-րդ դարի որմնանկարները<sup>12</sup>: Հայոց շրջանում անգամ հայտնի է եղել մոմաներկով (Էկառաստիկ եղանակով) նկարելու ավանդույթը: Այդ մասին իմանում ենք Ստեփանոս Սյունեցու (8-րդ դար) շնորհիվ, որը գտնում է, թե ճշմարիտ պատկերը մոմով և ներկով է լինում<sup>13</sup>: Պահպանվել են այդ եղանակով ստեղծված վաղ քրիստոնեական շրջանի բյուզանդական սրբապատկերներ: Մոմաներկով կատարված հայկական որմնանկարներ հայտնաբերվել են Պողոս-Պետրոս եկեղեցու բարբարոսական քանդման ժամանակ, իբրև համաշխարհային արվեստի պատմության եզակի երևոյթ արձանագրվել հայ և օտար գիտնականների կողմից, որոնք սակայն այնուհետև անգթորեն ոչնչացվել են:

Դեռևս 5-6-րդ դարերում հայ մատենագիրների մոտ հանդիպում են «պատկերագործ», «նկարիչ», «նկարող» բառերը, իսկ «նկարիչ» բառը առաջին անգամ ի հայտ է գալիս 12-րդ դարում, օրինակ՝ 1181 թ. Դրազարկում (Կիլիկիա) աշխատող Թորոս գրիչը հիշատակում է նկարիչ Խաչատուրին<sup>14</sup>:

Դժբախտաբար միջնադարի հայ գեղանկարիչների, մասնավորապես մանրանկարիչների կրթության ու աշխատանքին վերաբերող տեղեկությունները բավարար չափով չեն պահպանվել:

Մեզ չեն հասել մանրանկարներ, որոնք ներկայացնեին նկարչական դասի ընթացքը, և ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների մասին կարող ենք դատել միայն ձեռագրերի հիշատակարաններում մնացած ժլատ տեղեկություններով: Առհասարակ միջնադարյան դպրոցի մեջ դասի ընթացքը ցուցադրող մանրանկարներ գրեթե հայտնի չեն և այդ իմաստով զարմանալի մի բացառություն է նշանավոր մանկավարժ և Մեծոփի, Ցիպրականի ու Տաթևի վանական դպրոցների հիմնադիր Գրիգոր Շերենց Խլաթեցու 1419 թ. ծաղկած Ավետարանի (Մատենադարան, ձեռ. 3714) մեջ գտնվող պատկերը (թ. 14թ)<sup>15</sup>, որը ներկայացնում է նրան իր երկու աշակերտների հետ դասի ժամանակ<sup>16</sup>: Գրիգոր Խլաթեցին այստեղ ինքն իրեն նկարել է աթոռին նստած, ձախ ձեռքին բռնած աշակերտին պատժելու համար նախատեսված ճիպոտը, իսկ աջում՝ փոքրիկ գրատախտակը: Դասը պատաժանող աշակերտը ձեռքերը կրծքին խաչած, հլու-հնազանդ կանգնած է նրա առաջ, իսկ երկրորդ աշակերտը ոտքերը ծալապատիկ դիրքով նստած է՝ ձեռքին պատրաստ պահած ճիպոտների խուրձը:

Բարեբախտաբար, որոշ մանրանկարներ են մեզ հասել, որոնք ցուցադրում են միջնադարյան համալսարանների ղեկավարներին իրենց աշակերտների հետ: Այդ պատկերներից հնագույնը հայտնվում է մի պատառիկ թերթի վրա, որը գետեղված է իր հետ ոչ մի կապ չունեցող 1299 թ. Կիլիկիայում Վարդան գրչի ընդօրինակած Եսայու մեկնություններն

<sup>12</sup> Տե՛ս A. Kapoian-Kouymjian, L'Égypte vue par des Arméniens, Paris, 1988, pl. I-III.

<sup>13</sup> Ա. Գևորգյան, Ենչափս Լիև նկարագրություն ձեռագրերը: «Բաքրեր Երևանի համալսարանի», 1991, թիվ 2, էջ 74.

<sup>14</sup> Կ. Մարենոսյան, Հայ մանրանկարիչների հիշապահարանները (Ժ-ԺԵ դդ.), էջ 314:

<sup>15</sup> Հ. Հ. Դակորյան, Վասպուրականի մանրանկարչությունը, գիրք Բ, Երևան, 1982, էջ 79; Ա. Մարենոսյան, Ա. Մարարյան, Գրիգոր Շերենց Խլաթեցի, Երևան, 2000, էջ 34:

<sup>16</sup> Գունավոր վերապայությունը փետև Գ. Գ. Ակոպյան, Միննարու Վասպուրական XIII-XV դարերի Երևան, 1989, շ. 56-58, տար. XX; V. Nersessian, Treasures from the Ark, London, 2001, p. 68, 171-172.

ընդգրկող ձեռագրի (Երուսաղեմ, Հայկական պատրիարքարանի հավածարու, ձեռ. 365) մեջ<sup>17</sup>:

Այս բացառիկ խմբական պատկերը<sup>18</sup> ցուցադրում է Գլազորի համալսարանի ուսուցչապետ Եսայի Նշեցուն իր աշակերտներին դասավանդելու պահին (Ըկ. 1): Ուսուցչապետը ներկայացված է նստած, մանրանկարի վերին ձախ անկյունում: Նրանից անմիջապես ներքև, ձախից՝ մի շարքով, կողք-կողքի պատկերված են երիտասարդ վանականները: Մանրանկարի աջ մասում, վերևից ներքև, ցուցադրված է աշակերտների մի այլ խումբ: Երիտասարդ վանական աշակերտները վեղարներով են, և նրանց միայն դեմքերն են մկարված: Երկու շարքերում կան աշակերտներ, որոնք ձեռքերի մեջ երկյուղածորեն թաշկինակներով պահել են Սուրբ Գիրքը:

Մանրանկարի կենտրոնում, ներքևի շրջանակից սկիզբ առնող, վեր բարձրացող նոան ծառը գրավում է տեսարանի շուրջ երեք քառորդը: Ծառի տակ նստած է գրակալի վրա դրած գիրքը բռնած վեղար չունեցող մի ուրիշ աշակերտ: Նա կարդում է այն հատվածները, որոնք մեկնաբանում է ուսուցչապետը: Երկնային ներշնչանքը Եսայի Նշեցու զիխավերում ցուցադրված սեղմենտից լցվում է նրա ունկը և, բերանից դուրս գալով՝ ուղղվում ճյուղավորված ձևով դեպ աշակերտները<sup>19</sup>: Ուսուցչապետի խոսքը աշակերտներին հասցնելու այս զարմանալի ձևը հիշեցնում է 12-րդ դարի ֆրանսիական գրքարվեստի հայտնի Ամուշներից մեկում՝ Լիմոժի Խորհրդատեսրում (Sacramentary from Limoge) (Փարիզ, Ազգային Գրադարան, Ms. lat. 9438) Հոգեգալուստը ներկայացնող մանրանկարի<sup>20</sup> բացառիկ պատկերագրությունը: Այդտեղ Սուրբ Հոգին, սկիզբ առնելով Փրկչի գլխից, սինուսային ձև ունեցող գծով իջնում է ներքև, ապա բաժանվում ճյուղավորված կերպով ու դիպչում առաքյալների գլուխներին: Ակնհայտ է, որ համեմատվող մանրանկարներում ներշնչանքը աշակերտներին հասցնելու ձևը նույնն է: Այս երևույթն այնքան բացառիկ է, որ մենք կասկած չունենք, որ հայ մանրանկարիչն իր ձեռքի տակ է ունեցել հիշյալ ֆրանսիական մանրանկարի հետ աղերսվող մի պատկեր կամ վերջինիս նախօրինակը:

Հայկական այս մանրանկարից ցած, լուսանցքում, պատկերված է ծնկաչոք աղոթող մի կերպարանը, որը երևի ինքը մանրանկարիչն է:

Աշակերտներին ուսուցչապետի հետ ներկայացնող մեկ այլ ուշագրավ մանրանկար է պահպանվել մի ուրիշ պատառիկի վրա, որը գետեղված է 14-15-րդ դարերի սահմանագծին ապրած հոչակավոր մատենագիր, փիլիսոփա Գրիգոր Տաթևացու Սաղմոսների մեկնությունն ընդգրկող մատյանում (Մատենադարան, ձեռ. 1203): Այս ստեղծագործությունը 14-րդ

<sup>17</sup> Գունավոր վերաբերությունը գլեն Armenian Art Treasures in Jerusalem, p. 76-77, fig. 92.

<sup>18</sup> Th. F. Mathews and A. K. Sanjian, Armenian Gospel Iconography, The Tradition of the Glajor Gospel, with Contribution of M. V. Orna and J. R. Russel, Ed. by Th. F. Mathews, Washington D. C., 1991, p. 74.

<sup>19</sup> Slu Treasures in Heaven, Armenian Illuminated Manuscripts, Ed. by Th. F. Mathews and R. S. Wieck, New-York, 1994, p. 48-50, fig. 30.

<sup>20</sup> D. M. Robb, The Art of the Illuminated Manuscript, London, 1973, p. 205, fig. 139.

դարի վերջի կամ 15-րդ դարի սկզբի ընդօրինակություն է<sup>21</sup>: Ենթադրվում է, որ այն ծաղկած է Թաղեռն Ավրամենցի ձեռքով:

Գրիգոր Տաթևացին այս մանրանկարի մեջ ներկայացված է իր աշակերտների հետ, և անհայտ նկարիչը Տաթևացուն առանձնացրել է զգալիորեն խոշոր չափերով՝ պատկերելով կենտրոնում: Տաթևացին նստած է երկու ձեռքերով գավազանին հենված: Զախից աշակերտների խմբի մեջ, իր ուղիղ պահած զլխով և դիտողին ասես զննող, շեշտակի հայցրով, առանձնանում է մի վանական, որը, ըստ երևույթին, անանուն նկարիչն է: Թե՛ Տաթևացին և թե՛ աշակերտները վեղար են կրում: Տաթևի համալսարանի ուսուցչապետի կոնակից երևացող շենքի վրա զրված է՝ «Գրիգոր Վարդապետ»: Գրիգոր Տաթևացու աշքերից մեկը մյուսի համեմատ փոքր է նկարված: Այդպիսով, անհայտ մանրանկարիչը ակնարկել է Տաթևի համալսարանի ուսուցչապետի ունեցած աշքի հիվանդության մասին:

Դժբախտաբար շատ քիչ բան է հայտնի հայ մանրանկարիչների աշխատանքային պայմանների մասին, և չկան ձեռագրեր, որը խտացված լինի միջնադարյան նկարչական հիմնական գիտելիքը: Պահպանվել են առանձին, այսպես կոչված, պատկերուսուց գրքեր, և Վենետիկի Միսիթարյան միաբանության գրադարանում գտվող այդպիսի մի ձեռագրի մասին է Ս. Տեր-Ներսեսյանի հոդվածներից մեկը<sup>22</sup>: Գծանկարներ պարունակող այդ մատյանի մեջ կան պարզից դեպի բարդը զնացող զարդերի ուրվանկարներ, տերունական նկարներ, նաև նշված է, թե որ մասերում ինչ գումարով պիտի հաղորդվեն պատկերների բաղկացուցիչ մասերը և այլն:

12-րդ դարի արևմտյան նկարիչ Թեոփիլոսի կամ 13-14-րդ դարերի իտալացի նկարիչ Չեսին Չեսիակի գրած արվեստի տրակտատները<sup>23</sup> հիշեցնող գրվածքներ չեն պահպանվել, որոնք հեղինակված լինեն միջնադարի հայ մանրանկարիչների կողմից:

Հայ մանրանկարիչների շրջանում ընդունված է եղել լավ նախազաղափար օրինակ հանդիսացող ձեռագրի ընտրությունը և վերջինիս ընդօրինակությունը: Այսպես, 12-13-րդ դարերի սահմանագծի հայ ծաղկողների կողմից քանից ընդօրինակվել է Գրիգոր Մուրդանեցու օրինակը, որը չի հսկել մինչև մեր օրերը<sup>24</sup>: Այդ մասին կարելի է կարդալ այս օրինակի հիման վրա ստեղծված տարբեր ձեռագրերի հիշատակարաններում:

Հայ մանրանկարիչները աշխատում էին փնտրել և գտնել ու ընդօրինակել իրենցից առաջ ապրած հայ վարպետների բարձրարվեստ զարդարվածությամբ մատյանները: Կարելի է հիշել 17-րդ դարի Սեբաստիայում ապրող մանրանկարիչ Բարադամի կողմից թորոս Ռուլինի 1262 թ. Ավետարանից կատարված ընդօրինակությունը<sup>25</sup>: Հայտնի է նաև, որ Ութ նկարիչների Ավետարանը 17-րդ դարում մի քանի անգամ ընդօրինակվել է

<sup>21</sup> Գուեսվոր վերաբարությունը գլւն E. Korkhmazian, I. Drambian, G. Hakopian, Armenian Miniatures of the 13<sup>th</sup> and 14<sup>th</sup> centuries, Leningrad, 1984, ill.32.

<sup>22</sup> Slv S. Der Nersessian, Le carnet de modeles d'un miniaturiste arménien. Etudes Byzantines et Armeniennes-Byzantine and Armenian Studies, p. 665-672.

<sup>23</sup> The Medieval Artist at Work, p. 19.

<sup>24</sup> Т. А. Иzmайлова, Мургашский образец в армянской миниатюрной живописи. Труды Государственного Эрмитажа. Культура и искусство народов Востока, т. 5, 1961, с. 76-97.

<sup>25</sup> L. Chookaszian, Baralam. Saur Allgemeines Kunstlerlexikon, Bd. 6, München-Leipzig, 1992, S614-615.

Ղրիմի հայ մանրանկարիչների ձեռքով: Հետաքրքիր է նկատել, որ այս նույն ձեռագրի պատկերները Կիլիկիայում մոտավորապես 1280 թ. շուրջ իրենց հերթին ստեղծվել են 11-րդ դարում ծաղկված բյուզանդական նշանավոր Ավետարանի ձևավորումների հիման վրա (Ֆլորենցիա, Լաուրենցիան գրադարան, Plut. VI. 23)<sup>26</sup>: Այս մատյանը այդ ժամանակ (Ֆլորենցիա, Լաուրենցիան գրադարան, Plut. VI. 23)<sup>27</sup>: Այս մատյանը այդ ժամանակ (Ֆլորենցիա, Լաուրենցիան գրադարան, Plut. VI. 23)<sup>28</sup>: Հարկ է նշել, որ սա միակ բյուզանդական մատյանը չէ, որը հայկական միջավայրում է եղել և հասել մինչև մեր օրերը<sup>29</sup>:

Հայ մանրանկարիչների համար գեղարվեստական գիտելիքի աղբյուր են ծառայել ոչ միայն նախագաղափար օրինակները: Նրանք մասնագիտական լրացուցիչ պատրաստություն են ստացել նաև իրենց այլազգի գործընկերների հետ համատեղ աշխատելու ժամանակ: Երուսաղեմի Ս. Գերեզմանի վանքին կից խաչակիրների ստեղծած գրչատան մեջ 12-րդ դարի երրորդ քառորդին ընդօրինակված երկու ձեռագրերի նկարագրումները (Փարիզ, Ազգային Գրադարան, latin. 276, Վատիկան, Առաքելական Գրադարան, Latin. 5974), ըստ Հ. Բուխթալի, արդյունք են նույն, խաչակիր և հայ երեք վարպետների համատեղ աշխատանքի<sup>30</sup>: Այլազգի վարպետների մոտ ուսանելու հանգամանքով պիտի բացատրել առանձին հայ մանրանկարիչների արվեստում մինչ այդ բոլորովին անծանոթ, որ գիտելիքների հայտնվելը և մեծ թվով նորամուծությունների հանդես գալը:

Բյուզանդական արվեստից սկիզբ առնող գեղարվեստական երևույթների բուն դրսևը 12-րդ դարի հայ մանրանկարիչ Կոստանդինի ձևավորած 1193 թ. Ավետարանում (Վենետիկ, Մխիթարյան միաբանության գրադարան, ձեռ. 1635) հավանաբար հետևանք է նույն վարպետների մոտ սովորելու<sup>31</sup>: Նույն եզրակացությանը կարելի է հանգել Թորոս Ռուսինի արվեստում բյուզանդական կամ արևմտյան, մասնավորապես՝ իտալական արվեստից բխող առանձնահատկությունների ի հայտ գալու կապակցությամբ:

Արդեն նկատվել է, որ Թորոս Ռուսինին վերագրվող Լևոն արքայազնի (ապագա Լևոն Բթագավոր) առաջին պատկերում (Մատենադարան, ձեռ. 8321) վերջինիս լուսապատճենությունը պահպանվել է առաջին առաջնահատկությունների հետևանքը են որոշակի կնիքներով ուսկին կնքելու<sup>32</sup>, ինչը

<sup>26</sup> T. Velmans, Le Tetraevangile de la Lauretienne, Florence, Laur. VI. 23 Paris, 1971;

<sup>27</sup> S. Der Nersessian, Armenian Manuscripts in the Freer Gallery of Art, Washington D.C., 1963, p. 44.

<sup>28</sup> Ibid, p. 44, 45, 46.

<sup>29</sup> L. Chookaszian, On the Portrait of Prince Levon (Ms. Yerevan 8321), Revue des Etudes Armeniennes, T. 25, Paris, 1994-1995, p. 299-335.

<sup>30</sup> H. Buchthal, Miniature Painting in the Latin Kingdom of Jerusalem, Oxford, 1957, p. 32; L. Chookaszian, L'Ouvre de Toros Roslin et l'enluminure byzantine. Revue des Etudes Armeniennes, T. 28, Paris, 2001-2002, p. 405-406.

<sup>31</sup> Sl՛u S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century, vol. 1, Washington D. C., 1993, p. 16-21.

<sup>32</sup> L. Chookaszian, On the Portrait of Prince Levon (Ms. Yerevan 8321), p. 299-335.

տուկանական արվեստին բնորոշ տեխնիկական գիտելիք է<sup>33</sup> և հանդիպում է նաև այդ ժամանակի ֆրանսիական գրքարվեստում<sup>34</sup>: Այս երևույթը գոյություն չունի Թորոս Ռուլից Աախորդող ժամանակաշրջանի հայ գրքարվեստում և հայ վարպետի ստեղծագործության մեջ կարող էր հայտնվել միայն իտալացի եկվոր նկարչի հետ շփվելու, կողք-կողքի աշխատելու շնորհիվ: Ուշագրավ է, որ նույն նախշը ունեցող կնիքի դրոշմը երևան է զալիս միայն Լևոն արքայազնի դիմանկարին ժամանակակից խաչակրաց արվեստում, մասնաւորապես Սինայի Ս. Կատարինե վաճքի հավաքածուի սրբապատկերում, որը ներկայացնում է Աստվածամոր ննջման տեսարանը<sup>35</sup>:

Պահպանվել են մեծ թվով հայկական մատյաններ, որոնք 13-րդ և 14-րդ դարերում ձևավորվել են հայ ու իտալացի նկարիչների համատեղ շանքերով ինչպես Կիլիկիայում<sup>36</sup>, այնպես էլ Հռոմի, Ծեմովայի, Բոլոնիայի, Պերուջիայի և այլ իտալական քաղաքների հայկական վաճքերում<sup>37</sup>: Միանգամայն բնական է, որ համագործակցության այդ մթնոլորտում այս արվեստագետները միմյանցից սովորում էին ինչ-ինչ գիտելիքներ:

Հայտնի է, որ հայ մանրանկարիչները, գրքի նկարազարդման արվեստը զարգացնելուն զուգընթաց, աշակերտներ էին պատրաստում վանական դպրոցներում, նաև նրանց ներգրավելով իրենց աշխատանքների մեջ: Պահպանվել են բազմաթիվ հայկական ձեռագրեր, որոնց հիշատակարաններում վարպետները արձանագրում են իրենց օգնած սաների անունները: Քիչ չեն նաև դեպքերը, երբ հիշատակարանները լոռում են այդ մասին: Ծառ հաճախ աշակերտները հարգանքով և երախտագիտությամբ նշում են իրենց ուսուցիչների անունները, բայց բազմաթիվ դեպքերում նրանք նաև ոչինչ չեն հայտնում: Մեծ թվով մատյաններ առհասարակ գրկվել են իրենց հիշատակարաններից, որոնք ընկել-կորել են: Այսպիսի պարագաների բերումով դարերի ընթացքում հարատևած գեղանկարչական դաստիարակության սերնդից-սերունդ շարունակված գիծը վերականգնելը երբեմն անկարելի է:

<sup>33</sup> Mojmir Frinta, An Investigation of the punched decoration of Mediaeval Italian and Non-Italian Panel paintings. The Art Bulletin XLVII, no. 2 ( June 1965 ), pp. 261-265, figs. 20, 25.

<sup>34</sup> Idem, Punchmarks in the Ingeborg Psalter. The Year 1200: A Symposium, New York, 1975, pp. 251-260; Ch. Maumene, L. D'Harcourt, Iconographie des Rois de France, Premiere Partie, Paris, 1929 (=Archives de l'Art Francaise, t. XV), Paris, 1929, pl. I(1-4 ), p. 19.

<sup>35</sup> K. Weitzmann, Icon Painting in the Crusader Kingdom. Dumbarton Oaks Papers, vol. 20, Washington D. C., 1966, p. 56, figs. 16, 17.

<sup>36</sup> S. Agémian, Manuscrits Arméniens Enluminés du Catholicossat de Cilicie, Préface de S.S. le Catholicos Karekine II, Antelias-Liban, 1991, p. 19-30, pl. H-K, XVIII-XXVI.

<sup>37</sup> Т. А. Иzmайлова, Армянская рукопись, написанная в Генуе в 1325 году и ее серебряный оклад 1347 года. – Византийский Временник, т. XX, Москва-Ленинград, 1960, с. 243-258; E. Korkhazian, I. Drampian, and G. Hakobian, Armenian Miniatures of the 13<sup>th</sup> and 14<sup>th</sup> Centuries from the Matenadaran Collection, p. 160, 164; S. Der Nersessian, A. Mekhitarian, Armenian Miniatures from Isfahan, Preface and Introduction by H.H. Catholicos Karekin II, Bruxelles, 1986, p. 57, 60, fig. 34; E. Korkhazian, Deux manuscrits arméniens écrits et illustrés à Bologne. – Atti del Quinto Simposio Internazionale di Arte Armena, Venezia-Milano-Bologna-Firenze 1988 28 maggio-5 giugno, San Lazzaro-Venezia, 1991, p. 517-521, Э. Корхмазян, Армянские рукописи, иллюстрированные в Италии. «Պատմաբանասիրական հանդես», 1971, թիվ 3, էջ 247-255:

Այսպես, օրինակ, հնարավոր է պարզել, որ 1174 թ. Նարեկը ծաղկող Գրիգորի ուսուցիչը վերը հիշված Կոստանդին է, բայց ով է Գրիգորի աշակերտը կամ ովքեր են աշակերտները, պարզ չէ:

Կոստանդինի ձեռագրերի և Սկեոայի Ավետարանի պատկերների նմանությունները թերևս հուշում են, որ վերջինիս ձևավորող մյուս Գրիգորը նույնական Կոստանդինի աշակերտն է և հայտնի է անգամ, որ այս Գրիգորին աշակերտել են Հովհաննես գրիչն ու Գրիգոր Սարկավագը: Վերջինս ձեռագրերից մեկում իր ուսուցչին անվանում է «Սկեոայի ամենայն գրիչը»<sup>38</sup>: Սկեոայում նրա ուսուցիչ Գրիգորը 1215 թ. սկսել է ծաղկել իր վերջին Ավետարանը (Սպահան, Հայկական Ամենափրկիչ վանքի հավաքածու, ձեռ. 546/25), բայց առաջացած տարիքում մահացել է, և Գրիգոր Սարկավագը վերջացրել է այն հաջորդ տարի Տարտակում<sup>39</sup>:

Դժբախտաբար, փաստերի պակասի պատճառով հնարավոր չէ պարզել, թե ով է աշակերտել Գրիգոր Սարկավագին:

Հիշատակարանների տվյալներից և մանրանկարների առնչություններից հայտնի է դարձել, որ մեծահամբավ Թորոս Ռուսինի ուսուցիչներն են եղել Հռոմեացիում գործող Կիրակոս և Հովհաննես մանրանկարիչները, բայց որ ծաղկողներին է դասավանդել Թորոս Ռուսինը, դեռևս հայտնի չէ: Հովհաննես արքայեղբոր աշակերտների թվում է եղել Գրիգոր Պիծակը, որին աշակերտել է նրա որդին՝ հոչակավոր Սարգիս Պիծակը, իսկ վերջինս ում է ուսուցանել, առայժմ հայտնի չէ:

Այս սերնդից-սերունդ ձգվող կապակցությունները փորձել է պարզել Նորայր արքայի պիսկոպոս Պողարյանը, և դա նրան հաջողվել է միայն որոշ չափով, այն էլ սկսելով Գրիգոր Տաթևացուց՝ 1378 թ. և հասնելով մինչև Սիրիայում գործած Մուրադ Բերիացին, այսինքն՝ 1642 թ.<sup>40</sup>: Ավելի քան 300 տարի ձգվող այս շղթան մեկն է բազմաթիվ, ժամանակին գոյություն ունեցած կապակցությունների շղթաներից, որոնք հավանորեն հավետ թաղվել են ժամանակի ավագների տակ:

Այս շղթայի մեջ առանձին ճյուղավորում է տալիս և բոլորովին այլ աշխարհագրություն ձեռք բերում 1500-ական թվականներից երեսացող մի այլ շղթա, որի սկիզբը մանրանկարիչների երեք սերունդներ տված, հայտնի ծաղկողների հայր Սարգիս «Մեծ» Խիզանցին է: Նա սովորել է Աղթամարում Հովսեփ Աղթամարցի վարդապետի և Զաքարիա Գնումեցի եպիսկոպոսի մոտ և ապա ինքը իր հերթին ուսուցանել իր որդիներին՝ Մարտիրոս և Սարգիս «Փոքր» Խիզանցիներին: Մարտիրոսի որդի Գրիգորիսը հոր հետ ծաղկել է առանձին մատյաններ և թերևս վերջինից սովորել այդ արվեստը: Այս երկուսից մանրանկարչություն է սովորել նաև Սարգիս Մազման Մոկացին: Մարտիրոսին և Սարգիս Մազման Մոկացուն է աշակերտել Մեսրոպ Խիզանցին, որը հետագայում՝ 1606 թ. սկսած տասնամյակներ շարունակ աշխատել է Նոր Ջուղայում (Սպահան), ընդհուպ մինչև 1650 թվականը: Մարտիրոսն ուսուցիչն է եղել նաև իր զարմիկ Խաչատոր Խիզանցու, որի հետ նույնական ձեռագրեր է ձևավորել: Սարգիսն իր հերթին մանրանկարչության արվեստն է սովորեցրել:

<sup>38</sup> Տե՛ս S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, p. 37.

<sup>39</sup> S. Der Nersessian, A. Mekhitarian, Armenian Miniatures from Isfahan, p.30, fig.7-11.

<sup>40</sup> Ա. արքեպս. Ծովական (Պողարյան), Հայ նկարողներ, Երևան, 1989, լ. 229-233.

րակոս Խիզանցուն ու նրա հետ ծաղկել մատյաններ<sup>41</sup>: Այս ընտանիքի անդամների ու անց աշակերտների համատեղ գրած<sup>42</sup> և նկարագրդած ձեռագրերի թիվը հսկայական և դրանք այսօր ցրված են աշխարհով մեկ:

Մանրանկարիչ-ուսուցիչ և մանրանկարիչ-աշակերտ հարաբերություններն ուսումնարելիս շատ կարևոր է պարզել, թե ո՞ր տարիքից է սկսում արվեստագետի ինքնուրույն ջխատանքը, որքա՞ն է տևում մեկ մատյանի պատկերագարդումը, ինչպե՞ս է այն կազմակերպում արվեստանոցի ներսում պատվերը ստանալիս և թե առհասարակ ինչքա՞ն ապրել հայ ծաղկողները:

Առաջին հարցին պատասխանելու առումով ուշագրավ է արդեն վերը հիշատակված թիգոր Շերենց Խլաթեցու թողած հիշատակարաններից մեկը: Երուսաղեմում 1415 թ. նորինակած մատյանում նա գրում է, որ ինքը վաթունվեց տարեկան է և քառասունութ արվա հոգևորական: Դա նշանակում է, որ նա ծնվել է 1349 թ. և, ըստ Ներսես քին. Ներսյանի, մատյաններ սկսել ընդօրինակել 18 տարեկանից, այսինքն՝ 1367 թվականից<sup>43</sup>: Այստեղ է, որ քրոնիկ հարձակվել են Արծկեի և Ցիանավանքի վրա, բոնել Գրիգոր Շերենց Խլաթեցուն և հավատքը չուրանալու համար նահատակել ալեհեր վանականին: Այդ ապրել կատարվել է 1425 թ. մայիսի 27-ին, այսինքն՝ Գրիգոր Շերենց Խլաթեցին ապրել է թանասունվեց տարի<sup>44</sup>:

Փաստորեն սա հազվագյուտ դեպքերից մեկն է, եթե հայտնի է մանրանկարչի ծննդյան մահվան ստուգ թվականը: Թովմա Մեծուինցին իր Պատմության մեջ Գրիգոր Շերենց լաթեցու մասին գրում է, որ նա նիսունինց տարի շարունակ, վաճքից վաճք գնալով, օր գիշեր ձեռագրեր է ընդօրինակել: Իսկ Առաքել Բաղիշեցին նշում է, որ Գրիգոր Շերենց լաթեցին տարվա բոլոր եղանակներին ամեն ժամ, օր ու գիշեր, տանը թե դուրսը, վաճառում, թե զյուղում, թե քաղաքում մինչև իր նահատակության օրը մատյաններ է ընդօրինալ<sup>45</sup>: Դրանք նա նվիրել է եկեղեցիներին կամ վաճառել ու դրամը բաժանել աղքատներին:

Ծառ քիչ է պատահում, որ պատմությունը այսպիսի ճշգրտությամբ պահպանած լինի միայն հայ ծաղկողի կյանքի մանրամասները, այլև գոնե ծննդյան ու մահվան թվականը: Ավելի հաճախ մասնագետները ստիպված են փորձել վերականգնել մանրանկարչի մահվան ու մահվան թվականները և կենսագրական մյուս տվյալները՝ ուշադրություն սրձնելով բոլորովին կողմնակի թվացող փաստերին:

Այսպես, օրինակ, միջնադարի հայ մեծանուն մանրանկարիչ Թորոս Ռուլինին առնչվող նատորների հիմնական մասը պահպանել է ընդօրինակության ստուգ ժամանակ, հետևաբար դժվար չէ որոշել, թե ինչ շրջան է ընդգրկում նրա գործունեությունը: Զեյնինի Ավետարանը ստեղծվել է 1256 թ., իսկ Մալաթիայի Ավետարանը՝ 1267-1268 թվականներին: Թորոս Ռուլինին վերագրվող ամենահին մատյանը, որի մաս է կազմում Լևոն

<sup>41</sup> Armenian Art Treasures in Jerusalem, p. 92-94, fig.129-136; S. Der Nersessian and A. Mekhitarian, Armenian miniatures from Isfahan, p. 30, fig. 7-11.

<sup>42</sup> Ա. Գևորգյան, Ենչպես էին նկարագրդում ձեռագրերը, լ. 63:

<sup>43</sup> V. Nersessian, Treasures from the Ark, p.171.

<sup>44</sup> Ա. Մարտիրոսյան, Ա. Մարտրյան, Գրիգոր Շերենց Խլաթեցի, լ. 35:

<sup>45</sup> V. Nersessian, Treasures from the Ark, p.171.

արքայազնի պատանեկան դիմանկարը, համարվում է մոտավորապես 1250 թվականի գործ<sup>46</sup>: Վերջինս նկարչի կենսագրությանն առնչվող առաջմ առաջին, թեև մոտավոր, բայց հայտնի տարեթիվը է: Մալաթիայի Ավետարանի ընդօրինակության ավարտման բարձրին՝ 1268 թվականը, վերջին ստուգ տարեթիվը է Ռուսինի վերաբերյալ: Այս դիտարժանությունը թույլ են տալիս հայ արվեստագետի ստեղծագործական շրջանը տեղավորել 1250-1268 թվականների միջև:

Ելենով վերը հիշված փաստերից, Լ. Ռ. Ազարյանը փորձում է որոշել Թորոս Ռուսինի կենսագրության անհայտ դրվագները: Նա ուշադրություն է դարձնում հատկապես երկու հանգամանքների վրա, որոնցից առաջինն առավել վաղ երկերի գեղարվեստական բարձր մակարդակն է: Լ. Ռ. Ազարյանի կարծիքով, Զեյթունի Ավետարանի ձևավորումների և Լուս արքայազնի դիմանկարի «կատարողական վարպետությանը տաղանդավոր մարդը կարող է հասնել մոտավորապես 20-25 տարեկան հասակում»<sup>47</sup>:

Գիտնականը նաև նկատում է, որ, ըստ 1260 թ. Ավետարանի հիշատակարանի, նկարիչն այդ ժամանակ արդեն որդի ուներ: Հաշվի առնելով այս երկու հանգամանքները, Լ. Ռ. Ազարյանը ենթադրում է, որ 13-րդ դարի 50-ական թվականներին Թորոս Ռուսինը շուրջ 30 տարեկան էր: Մենք համամիտ ենք այն հարցում, թե Զեյթունի ձեռագիրը նկարչի ամենավաղ գործը չէ, և որ նախկինում ստեղծված նրա մյուս երկերը չեն պահպանվել կամ դեռևս չեն գտնվել: Լ. Ռ. Ազարյանը միանգամայն իրավացի է, որ 1256 թ. Ավետարանը նկարագրելիս Ռուսինի «ստեղծագործական անհատականությունը արդեն վերջնականորեն ձևավորված էր»<sup>48</sup>: Մենք, սակայն, չենք կարող համաձայնվել Լ. Ռ. Ազարյանի հետ, որ Զեյթունի Ավետարանի պատկերների կամ Լուս արքայազնի դիմանկարի կատարողական վարպետությանը Ռուսինը կարող էր հասնել 20-25 տարեկան հասակում:

Լ. Ռ. Ազարյանի փաստարկներն օգտագործելով և դրանք փոքր-ինչ զարգացնելով, ինչպես նաև բոլորովին այլ կովաններ գործածելով, թերևս կարելի է որոշ չափով տեղաշարժել Ռուսինի ծննդյան մոտավոր թվականը: Վերջինս հաշվարկելու համար անհրաժեշտ է պարզել, թե քանի տարի էր տեսում մանրանկարիչների ուսումնառության շրջանը: Դժբախտաբար հայկական ձեռագրերը չեն նշում, թե որքան ժամանակ էր պետք վարպետ մանրանկարիչ դառնալու համար:

Իտալական արվեստի գործերի հետ Թորոս Ռուսինի մանրանկարների ունեցած բազմաթիվ ընդհանուրությունները թույլ են տալիս օգնության համար դիմել Լեռնարդո դա Վինչիի հայրենակիցների փորձին՝ պարզելու, թե 13-րդ դարում մոտավորապես որքա՞ն ժամանակ էր անհրաժեշտ գեղանկարչության մեջ հմտանալու համար: Զարմանալի է, բայց փաստ, որ այս հարցի պատասխանը կարելի է գտնել իտալական գրավոր աղբյուրներում, մասնավորապես՝ Չենինո Չենինիի գեղանկարչությանն ու արվեստին նվիրված վերոհիշյալ աշխատության մեջ: Վերջինիս մեջ, 67-րդ գլխում, Չենինին հաշվարկում է, որ նկարչի աշակերտության շրջանը տեսում է տասներկու տարուց ավելի: Չենինին տասներկու տարի սովորել է Անյոլոյի մոտ, իսկ Անյոլոյի հայրն ու ուսուցիչը՝ Փլորենտացի Տադեո Գադդին,

<sup>46</sup> Տե՛ս Գ. Յովսեֆիեան, Կոսդանդին Ա կաթոլիկոս..., էջ 20:

<sup>47</sup> Տե՛ս Լ. Ռ. Ազարյան, Կիլիկյան մանրանկարչությունը XII-XIII դդ., Երևան, 1964, էջ 111, 126:

<sup>48</sup> Տե՛ս նույն փեղում:

շուրջ քանչորս տարի ուսանել է Զոտոտոյի ձեռքի տակ: Ականակ նկարչի կյանքի այս փուլին իտալիացում սովորաբար հաջորդել են որևէ վարպետի արվեստանոցում օգնական աշխատելու՝ փորձառություն կուտակելու երկար տարիները:

Հայ մեծ նկարչի ծննդյան մոտավոր ժամանակը հաշվարկելու համար Զենինի տրամադրած տվյալները կիրառելը բնակ էլ հիմնազուրկ չէ<sup>49</sup>: Տեղին է այստեղ նորից հիշել, որ 13-14-րդ դարերում հայ և իտալացի ծաղկողների համատեղ շանքերով և՛ Կիլիկիայի, և՛ իտալիայի հայկական գրչատներում զգալի թվով հայերեն ձեռագրեր են նկարագրվել<sup>50</sup>: Դա նշանակում է, որ հայ և իտալացի վարպետների մասնագիտական հմտությունն ու պատրաստվածությունը գտնվում էր համապատասխան բարձրության վրա: Այլապես դժվար է պատկերացնել, որ նրանց միջև որևէ համագործակցություն հնարավոր լիներ: Ասվածից հետևում է, որ թե՛ հայերի, թե՛ իտալացիների նկարչական մասնագիտացման համար անհրաժեշտ էին մոտավորապես նույն քանակով տարիներ:

Կարելի է ենթադրել, որ ինչպես բազմաթիվ երեխաներ, Թորոս Ռոսլինը ևս սկսել է նկարել սովորել առնվազն 13-14 տարեկանից:

Եթե ընդունենք, որ 1256 թվականին Զեյթունի Ավետարանը ձևավորելիս Ռոսլինը եղել է 20-25 տարեկան (ինչպես գտնում է Լ. Ռ. Ազարյանը), ապա կստացվի, որ նկարիչը ծնվել է 1231-1236 թվականների միջև ընկած որևէ տարում: Եթե ճշգրիտ համարենք այս եզրակացությունը, ուրեմն հարկ է, որ ընդունենք, թե Ռոսլինը 13 տարեկան է եղել 1244-1249 թվականների միջև գտնվող ինչ-որ մի տարում կամ 14 տարեկան դարձել 1245-1250 թվականների ընթացքում: 1244-1249 կամ 1245-1250 թվականներից սկսած նա պիտի ձեռնարկեր նկարել սովորելու գործը: Քանի<sup>o</sup> տարի պիտի տևեր աշակերտության շրջանը: Զենին Զենինի նման Ռոսլինը պիտի ուսաներ տասներկու տարի<sup>o</sup>, այսինքն՝ տարրական մասնագիտացման հասներ 1256-1261 կամ 1257-1262 թվականների միջև ընկած տարիների<sup>o</sup>: Սա այնքան էլ համոզիչ չի թվում, որովհետև նշված տարիներին հայ նկարիչը վաղուց արդեն մասնագիտական հասունացման էր հասել և գլխավորում էր Հոռմելայի մյուս երփնագրողներին:

Այստեղ է, որ Լ. Ռ. Ազարյանի կարծիքը քննություն չի բռնում: Հաշվարկներն իրենց չեն արդարացնում նաև այն դեպքում, եթե Ռոսլինին 20-25 տարեկան ենք համարում՝ Լևոն արքայազնի դիմանկարը վրձնելու ժամանակ:

Կասկածից վեր է, որ Թորոս Ռոսլինը 1256 թվականի Զեյթունի Ավետարանը կամ Լևոն արքայազնի պատկերը ստեղծելիս 20-25 տարեկանից բարձր է եղել և չի ծնվել 1231-1236 կամ, առավել ևս՝ 1225-1230 թվականների ընթացքում: Տարակույս չկա, որ նա ծնվել

<sup>49</sup> Տե՛ս Չեզիլո Չեզինի, Книга об искусстве или Трактат о живописи, Перевод с итальянского А. Лужицкой, Под редакцией и со вступительной статьей А. Рыбникова, Москва, 1933, с.5, 60.

<sup>50</sup> Տե՛ս S. Agémian, Manuscrits Arméniens Enluminés du Catholicossat de Cilicie, p. 19-30, pl. H-K, XVIII-XXVI; T. A. Измайлова, Армянская рукопись, написанная в Генуе в 1325 году и ее серебряный оклад 1347 года, с. 243-258; E. Korkhmadzian, I. Drampian and G. Hakobian, Armenian Miniatures of the 13<sup>th</sup> and 14<sup>th</sup> Centuries from the Matenadaran Collection, p.160, 164; S. Der Nersessian, A. Mekhitarian, S. Der Nersessian and A. Mekhitarian, Armenian Miniatures from Isfahan, p. 57, 60, fig. 34; E. Korkhmadzian, Deux manuscrits arméniens écrits et illustrés à Bologne, p. 517-521, Է. Корхмазян, Армянские рукописи, иллюстрированные в Италии, ст. 247-255.

թվում է, թե կարելի էր բավարարվել այս արդյունքներով և կանգ առնել այստեղ։ Սակայն մեր հաշվարկների մեջ մեզ առավել խոցելի է թվում Ծովական աշակերտության շոշանը նույնքան համարելը, որքան որ Չեսինիից է եղել։ Վերջինս նշում է, որ Տաղեան Գաղղին քանչորս տարի է ունանել։ Չեսինիի տասներկու և Գաղղիի քանչորս տարիների միջև պայմանականորեն միջին թիվ ընդունելով տասնութը՝ հնարավոր է ենթադրել, որ առավելագույնը մոտավորապես այդքան տարիներ են հարկավոր եղել Ծովական զեղանկարչական, ինչպես նաև գրչագրական հմտություն ձեռք բերելու համար։ Այս տասնութ տարիների մեջ կարելի է նաև տեղադրել այն ժամանակը, որ Ծովականը պիտի անցկացներ կ. Պոլսում կամ Նիկիայում կամ Երուսաղեմում, անգամ Բաղկաններում և Իտալիայում՝ կատարելագործվելու համար զեղարվեստական անթիվ հրաշակերտների ու ընտիր վարպետների միջավայրում։

Հոռմկլայի արվեստանցի ղեկավարի պաշտոնը ստանձնելուց առաջ նա պետք ուներ գիտելիքների, որոնք չեն նկատվում Երա ուսուցիչների՝ Կիրակոսի ու Հովհաննեսի ստեղծագործություններում։ Այդ գիտելիքների աղբյուրը մենք տեսնում ենք Կիլիկիայից դուրս գտնվող տարածքներում։ Հոռմկլայի արվեստանցի ղեկավարի պատասխանառու դերն հանձն առնելու համար Ռուսինը պետք է որ մեծ պատրաստություն անցներ՝ հստակ պատկերացնելու համար այն բոլոր փուլերն ու գործընթացները, որոնք անհրաժեշտ են իր ձեռագրերի ծննդյան համար։ Հարկ է չանուել, որ մեծ նկարիչը ուսումնասիրել է նաև հայ գրչությունը և դրա հետ մեկտեղ՝ լատինական ձեռագրերի ընդօրինակության առաճնահատկությունները։

Կասկածից վեր է, որ ոչ միայն հայ, այլև բյուզանդական ու լատինական Արևմուտքի, մանավանդ իտալական մշակույթի մեջ խորամուխ լինելու համար շատ ժամանակ էր անհրաժեշտ: Ռուլինի աշակերտության շրջանը տասնութ տարի համարելով, կարելի է առավելագույն չափով մոտենալ Շկարչի ծննդյան տարեթվին, այսինքն՝ ստանալ 1210-1216 թվականները: Այս եզրակացությունից հետևում է, որ 1250 թվականին Ռուլինը պետք է լիներ 34-40 տարեկան, իսկ 1256 թվականին՝ 40-46 տարեկան: Հայ մեծ Շկարչի ծննդյան տարին 1210-1216 թվականների ընթացքում տեղադրելու և լրացնից հիմնավորելու համար հարկ է նույնագեն ուշադրություն դարձնել մեկ այլ հաճախաբի վրա: Շատ կարևոր է

պարզել, թե առհասարակ միջնադարյան նկարիչները ի՞նչ տարիքում են արժանանում հասարակական գնահատման ու ճանաչման, այլ կերպ ասած՝ ո՞ր տարիքում են նրանք առաջին անգամ հիշատակվում ժամանակակիցների կողմից: Դժբախտաբար հայ հին գեղանկարիչների կենսագրությունները մեզ փաստեր չեն տալիս այս հարցին պատասխանելու համար: Խուլացի նկարիչների պարագայում կարծես թե հնարավոր է որոշ վիճակագրական մոտեցում ցուցաբերել մեզ հետաքրքրող հարցին:

Այսպես, օրինակ, հնարավոր է պարզել, որ 13-րդ դարի խուլացի երփնագրողներից Զիմաքուն առաջին անգամ հիշատակված է 32, Սիմոն Մարտինին՝ 31 և ավելի, Զոտուն՝  $37-40^{\circ}$  տարեկանում: Դուչչիոն 20-ից ավելի տարեկանում նշված է որպես «զարդարող», իսկ 30 և ավելի տարեկանում՝ իբրև «նկարիչ»: Թեև Լևոն արքայազնի դիմանկարն ու նրա մայր ձեռագիրը չեն պահպանել Ռուսինի անունը և մատյանի ընդօրինակման ճշգրիտ թվականը, այդուհանդերձ մեզ թվում է, որ հայ նկարիչը, ինքնուրույն ստեղծագործություն հեղինակելու համար, խուլացի իր ժամանակակիցների նման պետք է անցած լիներ 30 տարեկանի սահմանը և մոտեցած լիներ 40 տարեկանին:

Հստ երևույթին, Հոռմկլայի արվեստանոցի ղեկավարությունը ստանձնելու համար Ռուսինը պետք է բոլորեր իր չորրորդ տասնամյակը: Շատ հավանական է, որ 1256 թվականին Զեյթունի Ավետարանը ձևավորելիս նա իրոք անցել էր այդ սահմանը: Նույն տարիքում նա կարող էր առաջնորդել իրենից երիտասարդներին և նաև վայելել տարեցների կամ դեռևս ապրող ուսուցիչների հարգանքը:

Մեծ նկարչի ծննդյան մոտավոր ժամանակը որոշելու հարցում կարևոր է նաև մեկ ուրիշ հանգամանք. 1256 թվականի նրա ձեռագրի ավետարանիչների դիմանկարներում դիտվող ապրումներն ու խոհականությունը մտածել են տալիս դրանց հեղինակի ոչ միայն դիտողականության, այլև լուրջ կենսափորձի մասին: Մեզ թվում է, որ Զեյթունի Ավետարանի Հովհաննեսի դեմքը նկարողն ամեն դեպքում պետք է որ անցած լիներ քառասուն տարեկանի սահմանը: Նկարչի ծննդյան շրջանը պարզելու առումով ուշագրավ է նաև մեկ այլ հանգամանք. արվեստանոցի ղեկավար լինելու համար Ռուսինը մարդկանց առաջնորդելու, ուղղություն տալու, խնդիր առաջադրելու և այն լուծելու ձևեր գտնելու որոշակի փորձառություն պետք է ունենար, խիստ ու պահանջկոտ լիներ նրանց նկատմամբ:

Նյու Յորքի համալսարանի Գեղարվեստի ինստիտուտի պրոֆեսոր Թ. Մեթյուսը ժամանակակից ամերիկացի քիմիկոսների օգնությամբ կարողացել է բացահայտել, որ Կիլիկիայի գրչատներում շատ խիստ հսկողություն է եղել հատկապես ներկերի պատրաստման աշխատանքների նկատմամբ<sup>51</sup>:

Ամփոփելով մեր վերոհիշյալ դիտումներն ու հաշվարկները, կարող ենք ասել, որ Թորոս Ռուսինը ծնվել է 1210-1216 թվականների ժամանակահատվածում: Եթե նույնիսկ մեր հաշվարկները որոշ չափով չափազանցված են, ապա՝ միայն մի քանի տարիների իմաստով:

Թերահավատ ընթերցողին համոզելու առումով օգտաշատ կարող է լինել նաև Թորոս Ռուսինի մահվան մոտավոր տարեթվի և դրա հետ կապված որոշ պարագաների պարզա-

<sup>51</sup> Տե՛ս Լ. Չուգասզյան, Ամերիկայի քիմիկոսները և հայ մանրանկարչությունը: «Հանդես Ամսօրեայ», 1989, թիվ 1-12, լ. 151:

Դժբախտաբար, մենք չգիտենք, թե որքան էր կյանքի միջին տևողությունը Կիլիկիայում և հատկապես Ակարիչների կյանքի միջին տարիքը։ Այս հարցում ևս մեզ կարող են օգտակար լինել իտալացի Ակարիչների մասին պահպանված տեղեկությունները, մանավանդ 13-րդ դարում ապրած հեղինակների կենսագրական տվյալները։ Այսպես, օրինակ, հայտնի է, որ այդ հարյուրամյակի նշանավոր Ակարիչ Չիմաքուն նույնապես ապրել է մոտավորապես 60 տարի՝ 1240-1300 թվականների ընթացքում<sup>56</sup>։ Ուշագրավ է, որ այս Վարպետի անունը առաջին անգամ հիշված է 1272 թվականին, այսինքն՝ նրա 32 տարեկան եղած ժամանակ, իսկ ստեղծագործական ակտիվության շրջանը Վերաբերում է 1285-1295 թվականներին, այն է՝ 45 տարեկանից հետո։ Այս հանգամանքը մտածել է տալիս, որ 1256-1270 թվականներին Ռուլինի ակտիվությունը հնարավոր է, որ զուգաղիպեր նրա 46-60 կամ 40-54 տարեկան հասակին։

Հայ նշանավոր երփառագրողի մյուս իտալացի ժամանակակիցը՝ Ակարիչ Պուչչիոն ոի  
Բուոնինսենիան, ծնվել է մոտավորապես 1255 թվականին և մահացել 1319 թվականին,  
այսինքն՝ ապրել է շուրջ 64 տարի: Որպես Ակարիչ նա առաջին անգամ նիշվել է 1278  
թվականի մի փաստաթուրում<sup>57</sup>, ուրեմն առնվազն եղել է 20 տարեկան կամ, ինչպես են-  
թադրում են՝ ավելի մեծ: 1275 թվականի մեկ այլ աղբյուրում նա նիշված է որպես «զարդա-  
րող» (disegnatore), իսկ 1285 թվականին մի այլ տեղ՝ իբրև «Ակարիչ» (pictor): 1285 թվակա-  
նից սկսած և հատկապես 1302, 1308, 1311 թվականներին նա մեծ գեղանկարություն է ստեղ-

<sup>52</sup> Stv L. O., Ազարյան, Եղի, աշխ., լ. 129:

<sup>53</sup> Stéphane Der Nersessian, *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia*, p. 76.

<sup>54</sup> Stéphane Gsell, *L'Art Arménien des origines au XVII<sup>e</sup> siècle*, Paris, 1977, p. 138.

55 *Ibid*

<sup>56</sup> Slù E. Benezit, *Dictionnaire critique et documentaire des Peintres, Sculpteurs, Dessinateurs et Graveurs*, Nouvelle Edition, t. 3, Paris, 1976, p. 34; *L'opera completa di Cimabue il momento figurativo pregiottesco*, Presentazione, apparati critici e filologici di E. Sindona, Milano, 1975.

<sup>57</sup> E. Benezit, Dictionnaire critique et documentaire des Peintres, Sculpteurs, Dessinateurs et Graveurs - 300.

ծել տարբեր տաճարների համար: Փաստորեն նրա գեղարվեստական ակտիվությունը տևել է շուրջ 45 տարի, և մանավանդ բեղուն են եղել նկարչի կյանքի վերջին երկու տասնամյակները<sup>58</sup>:

Կարելի է ուշադրություն դարձնել նաև Զոտոտ դի Բոնոնեի (1266<sup>o</sup>-1337 թթ.) կենաց գրությանը: Նրա գործերից ամենից լավ պահպանվել են Պաղուայի Կապելլա դել Արենայի կամ Սկրովենիի Կապելլայի որմնանկարները (1303-1306 թթ.): Զոտոտն այդ ժամանակ հավանաբար եղել է 37-40 տարեկան, իսկ ընդհանուր առմամբ ապրել է թերևս 71 տարի<sup>59</sup>:

Հիշարժան է նաև Սիմոն Մարտինիի օրինակը: Նա ծնվել է մոտավորապես 1284 թվականին և մահացել 1344 թվականին, այսինքն՝ ապրել է 60 տարի կամ մի փոքր ավելի: Նրա ամենավաղ հայտնի գործը մեծ որմնանկար է Սիենայի Պալացցո Պուբլիկոյում, քաղաքային վարչության շենքում, և վերաբերում է 1315 թվականին, երբ հեղինակը եղել է 31 տարեկան կամ մի փոքր ավելի: Սիմոն Մարտինիի կյանքի առաջին երեսուն տարիների մասին ոչինչ հայտնի չէ: Հավանաբար այդ ժամանակ նա ճամփորդել է Ֆրանսիայում և ծանոթացել ֆրանսիական մշակույթին: 1317 թվականից մինչև 1335 թվականը նրա անունը գրեթե ամեն տարի կամ երկու տարին մեկ հիշատակվում է որպես այս կամ այն ստեղծագործության հեղինակ<sup>60</sup>: Այդ նշանակում է, որ նա 33 տարեկանից կամ մի փոքր ավելի բարձր հասակից մինչև 51 տարեկանը, կամ գուցե քիչ ավելի մեծ տարիքում է առավելագույն չափով դրսեռել իր ստեղծագործական կարողությունները:

Թորոս Ռոսլինի կյանքի մոտավոր տևողությունը որոշելու առումով արժե ուշադրություն դարձնել նաև անգլիացի մանրանկարիչների կենացրականներին: Հանրահայտ փաստ է, որ նրանցից շատ քերի անուններն են պահպանվել: Այսպես նշանակոր անգլիացի մանրանկարիչ Մեթյու Փլարիսը ծնվել է մոտավորապես 1200 թվականին և մահացել 1259 թվականին<sup>61</sup>: Ինչպես Ռոսլինը, նա ևս եղել է զրիչ, ծաղկող և հայ մեծ նկարչի ճման գրել չափածո ձևով: Իբրև աչքի ընկնող նկարիչ, որը նաև թողել է անհամեմատ մեծ գրական ժառանգություն, նա բացառիկ երևույթ է միջնադարյան արվեստի պատմության մեջ<sup>62</sup>: Այս վարպետների մյուս անգլիացի ժամանակակիցը՝ Վիլյամ դե Բրայենը, ձեռագրեր է ծաղկել 1230-1260 թվականներին<sup>63</sup>: Չի կարելի չնկատել, որ, ասես որոշակի մի օրինաչափության համաձայն, առավել բեղուն են նկարիչների կյանքի վերջին տասնամյակները:

Ամենատարբեր կողմերից մոտենալով խնդրո առարկա հարցերին, կարելի է մտածել, որ Թորոս Ռոսլինը ապրել է 1216-1270 կամ, ինչն ավելի հավանական է՝ առնվազն 1210-

<sup>58</sup> Տե՛ս G. Vigni, Duccio di Buoninsegna. – Encyclopedia of World Art, Vol. IV, London, 1961, p. 503-510; G. Ragionieri, Duccio, Catalogo completo, Firenze, 1989.

<sup>59</sup> Տե՛ս J. Pop-Hennessy, Giotto. – Encyclopedia ..., vol. VI, 1962, p. 339-355.

<sup>60</sup> Տե՛ս G. Paccagnini, Martini Simone. – Encyclopedia..., vol. IX, 1964, p. 502-507; P. Leone de Castris, Simone Martini, Catalogo completo, Firenze, 1989.

<sup>61</sup> Տե՛ս J. Backhouse, VI Devotions and Delights, The Illuminated books of Gothic England. In: Age of Chivalry, Ed. by N. Saul, New York, 1992, p. 78.

<sup>62</sup> X. Muratova, Vir quidem fallax et falsidicus, sed artifex praelectus, Remarques sur l'image sociale et littéraire de l'artiste au Moyen Age. Artistes, artisans et production artistique au Moyen Age, Colloque international, Organisé et édité par X.B. I Altet, Volume 1, Les hommes, Paris, 1986, p.63-72.

<sup>63</sup> Ibid, p. 80.

Առաջին դեպքերում կողմնակի փաստերի քննության ճանապարհով ընթանալով, հնարավոր է դառնում ճշգրտել մատյանների ընդօրինակման թվականը: Այսպես, օրինակ, 1256 թ. Ավետարանի մեջ Թորոս Ռուլինն արձանագրում է, որ Ճեղագիրն ընդօրինակվել է Հեթում Ա-ի թագավորության շրջանում, երբ Վերջինս տակավին զտնվում էր մոնղոլական արքունիքում<sup>67</sup>: Հայտնելով Հեթումի ճանապարհության դեռևս շարունակվելու մասին, Թորոս Ռուլինը մեզ հնարավորություն է տալիս ճշտելու Ճեղագրի ընդօրինակության մոտավոր ժամանակը: Հայտնի է, որ Հեթումը ուր է դրել Կիւիկիայի հողին 1256 թ. հունիսի 5-ին, հետևաբար՝ նույն տարեթիվը կրող մատյանը ավարտված է եղել մինչ այդ օրը<sup>68</sup>:

<sup>64</sup> Նորայր արքեսու. Ծովական /Դոդարյան/, Հայ նկարողներ, էջ 25-27:

<sup>65</sup> Վ. Ղազարյան, Սարգիս Պիծակ, Երևան, 1980, լ. 9:

<sup>66</sup> St' u lniuj̄s priběžnūm, l.9 142:

<sup>67</sup> Տե՛ս Ա. Միրմետեան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Հայեալի և Ամբիլիասի ու մասնաւորաց, Խափ. Բ., Հայեալ, 1936, լ. 139: Հայերեն ձեռագրերի հիշապակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, լ. 285:

<sup>68</sup> Տե՛ս ՂԱՂԲՅԱՆ, Մինուս և Լինե Մեծագործ, Վեհերիկ, Ս. Ղազար, 1885, էջ 554:

Ռուլինի՝ 1267-1268 թթ. Մալաթիայի Ավետարանի (Մատենադարան, ձեռ. 10675) հիշատակարանի տվյալներից հայտնի է, որ այդ ձեռագրի ընդօրինակությունը պարտվել է գերությունից Լևոնի վերադառնալու օրը: Հայտնի է, որ 1266 թ. Եղիպտական մամլուքները հարձակվում են Կիլիկիայի վրա և օգոստոսի 23-ին Սև լեռների մոտ, Անտիոքից ոչ հեռու գտնվող Մատի կոչվող լեռնանցքում, արյունահեղ ճակատամարտ է տեղի ունենում. արքայորդիներ Լևոնի ու Թորոսի գլխավորած հայկական զորքը, պարտություն կրելով, նահանջում է: Այդ մարտում Թորոսը զոհվում է, իսկ Լևոնը գերի է ընկնում և մամլուքների կողմից տարվում Եղիպտոս<sup>69</sup>: Այդ աղետալի իրադարձություններից հետո Հեթում թագավորը բանակցություններ է սկսում Ֆնորիստար սովթանի հետ, հաշտության պայմանագիր կնքում և պարտավորվում հանձնելու նրա պահանջած շրջանները: Փոխարենը, այդ զիջումների դիմաց բանտից ազատ է արձակվում Լևոն արքայազնը: Հայտնի է, որ վերջինիս վերադարձը Եղիպտոսից տեղի է ունեցել 1268 թ. հունիսի 24-ին: Մեր հաշվարկների համար այս թվականը հատուկ կարևորություն է ներկայացնում:

Ուշադրություն է գրավում, որ նոյն մատյանի հիշատակարանում նկարիչը խոր կակիծով արձանագրում է նաև իր հովանավորի և մեկնասի՝ Կաթողիկոս Կոստանդին Բարձրբերդցու մահը 1267 թվականին: Ըստ պատմական աղբյուրների՝ Կոստանդին Ա-ն վախճանվել է 1267 թ. ապրիլի 9-ին<sup>70</sup>, և քանի որ Մալաթիայի Ավետարանը նա է պատվիրել, ապա պարզ է, որ մատյանը սկսել են ձեռավորել այդ թվականից առաջ: Քանի որ գիտենք ձեռագրի ընդօրինակության ավարտման օրը, ուրեմն կարող ենք մոտավորապես պատկերացնել, թե որքան ժամանակում է Ռուլինը իր գործընկերների հետ գրել ու ծաղկել ձեռագիրը: Հավանաբար Մալաթիայի Ավետարանի ստեղծման հետ կապված աշխատանքները սկսվել են 1267 թ. ապրիլի 9-ից մի քանի ամիս առաջ, և արդեն ստուգ է, որ դրանք հատկապես իրականացել են այդ թվականից մինչև 1268 թ. հունիսի 24-ը ընկած ժամանակահատվածում:

Նոյն ձեռագիրը ծաղկելու համար երբեմն պատվերը տրվում էր մեկ կամ ավելի նկարիչների: Այսպես, օրինակ, 1166 թ. Ավետարանի (Մատենադարան, ձեռ. 7347) ձեռավորման տարբեր մասերի կատարման ոճական տարբերությունը ստիպում են Ս. Տեր-Ներսեսյանին մտածել, որ մանրանկարիչ Կոզման հեղինակողն է միայն ավետարանիչների դիմանկարների, իսկ խորանների ու անվանաթերթերի վրձնողն ուրիշ մեկն է, այսինքն՝ մատյանը նկարագրողները երկու վարպետներ են<sup>71</sup>: 1271 թ. Դրազարկում Կոստանդին գրչի գրած մատյանը ծաղկել է Գրիգոր քահանան, իսկ Ավետիսը՝ գրել գլխագրերը<sup>72</sup>: Որոշ մատյանների, օրինակ արդեն հիշատակված Ութ նկարիչների Ավետարանի, ձեռավորման մեջ իրենց մասնակցությունն են բերում մեծ թվով վարպետներ: Երբեմն հեղինակներից յուրաքանչյուրը մի շարք պատկերներ է վրձնում, ինչպես, օրինակ, Սպահանի Ամենափրկիչ վանքի հավաքածուի (ձեռ. 57/161) Կիլիկյան Ավետարանում, որը 13-րդ դարում

<sup>69</sup> Տե՛ս նոյն դեղում:

<sup>70</sup> Տե՛ս Մադարիք արքեպս. Օրմանեան, Դայոց Եկեղեցին և իր պարմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը, Կ.Պոլիս, 1912, լ. 72-73, 201:

<sup>71</sup> Տե՛ս S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, p. 12.

<sup>72</sup> Կ. Մաթևոսյան, Դայ մանրանկարիչների հիշատակարանները, լ. 319:

ԵԱ Բանդիսակուն ազգային շահութեան մասին պատճեանը ուղակիորեա ցուցադրող  
Միջնադարյան այս կամ այն մանրանկարչի աշխատանքը ուղղակիորեա ցուցադրող  
ստեղծագործություններ մեզ գրեթե չեն հասել, բայց հայտնի են այնպիսի պատկերներ,  
որոնք գաղափար են տալիս, թե ինչպիսին պիտի լինեին նման երկերը:

Հայկական Աստվածաշնչի նկարագրումների կապակցությամբ հիշարժան է Պավիլ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» երկի մեզ հասած հնագույն ընդօրինակություններից մեկը (Երևան, Մատենադարան, ձեռ. 1746) զարդարող պատկերը (Ակ. 2): Այս մատյանը ընդօրինակվել է նոյնապես Երգնակայում 1280 թ. Մխիթար Դափիրի ձեռքով և Պարոն Հովհաննեսի պատվերով: Զեռագրի միակ սկզբնաթերթը ներկայացնում է Պավիլ Անհաղթին, որի գրչից ծնվում են «Սահմանաց գրքի» առաջին բառերը<sup>77</sup>: Բացառված չե, որ այս մատյանի մանրանկարիչը նոյն Մխիթար Դափիրն է, թեև այդ մասին գրիչը լուսն է:

<sup>73</sup> See S. Der Nersessian, A. Mekhitarian, Armenian Miniatures from Isfahan, p. 39-57, fig. 12-31.

<sup>74</sup> See Armenian Treasures of Jerusalem, p. 66, fig. 84.

<sup>75</sup> Stéphane Deshayes, *Les Dossiers d'Archeologie*, Paris, N. 177, Decembre, 1992, p. 89.

<sup>76</sup> The Medieval Artist at Work, p. 72, pl. XXVI.

իր հիշատակարաններում: Սկզբնաթերթի մեջ ներկայացված Դավիթ Անհաղթը աթոռի վրա նստած, մի ձեռքում պահել է թանաքամանը, իսկ աջով՝ գրիչը բռնած գրում է «Որք» բառի առաջին տառը: Նա ցուցադրում է գրչի աշխատանքը, բայց քանի որ գրվող բառը զարդագրերով է ներկայացված, ուստի մանրանկարի միջոցով կարելի է պատկերացնել, որ այդպիսին կարող էր լինել և մանրանկարչի աշխատանքը: Այլ կերպ ասած, Դավիթ Անհաղթին կարելի է ընկալել թե՛ որպես տառը գրողի և թե՛ որպես տառը նկարողի: Կարելի է ասել, որ Դավիթ Անհաղթի պատկերը իր մեջ խոցնում է պատմական հիշողությունը և՝ գրչի, և՝ մանրանկարչի աշխատանքի մասին: Գուցե այս և Աստվածաշնչի պատկերների հեղինակները Դավիթ Անհաղթին, Մովսես մարգարեհին, Ղուկաս ավետարանչին նկարելիս աշքի առաջ են ունեցել վանական արվեստանոցի իր գործընկերներից մեկին կամ մյուսին:

Ս. Տեր-Ներսեսյանը նշում է, որ 1269 թ. Երգնկայում Սարգիս արքեպիսկոպոսի պատվերով ընդօրինակված վերոհիշյալ Աստվածաշնչը ունի որոշ սկզբնաթերթեր, որոնց ձևավորումները իրենց ոճով շատ մոտ են Դավիթ Անհաղթին ներկայացնող վերոհիշյալ մանրանկարին<sup>78</sup>:

Համեմատվող երկու ձեռագրերի պատկերների ընդհանրությունները թերևս պետք է բացատրել այդ մատյաններում Մխիթար Դպիրի որպես մանրանկարչի ունեցած աշխատանքային ներդրումով:

Հետաքրքիր է նկատել, որ ընդհանրապես արվեստի գործերը ստեղծելու պահին ներկայացված նկարիչներին պատկերող արևմտյան երկերը վերաբերում են 13-րդ և 14-րդ դարերին<sup>79</sup>: Իսկ մանրանկարիչներին իրենց աշխատանքի ընթացքում ցուցադրող արևմտյան գրքարվեստի օրինակները ի հայտ են գալիս 12-րդ դարում<sup>80</sup>: Միջնադարյան ձեռագրերը ուսումնասիրելիս ակամայից մերժ ընդ մերժ մտածում են, թե առավելագույնը որքա՞ն նկարագրող ձեռագրեր կարող էր հեղինակել այս կամ այն հայ մանրանկարիչը իր կյանքի ընթացքում: Այս հարցի պատասխանը շատ հարաբերական կարող է լինել: Գրչագիր հատորների փետրվող թվին գոնե որոշ չափով մոտենալու համար պետք է պարզել, թե առանձին վերցրած մի մանրանկարչից մեկից ավելի քանի մատյանները հատկապես երբվանից են պահպանվել, որ դարից և որ մանրանկարիչներից են մեզ հասել առավել մեծ թիվ կազմող նկարագրող մատյանները և որքան են դրանք:

Այս հարցի պատասխանը տալու համար առաջին հերթին պետք է հաշվի առնել, որ զանազան հանգամանքների բերումով, որոնք անզամ անձնական պարագաների հետ կարող են կապված լինել, հայ ծաղկողների ձևավորած ոչ բոլոր մատյաններն են մեզ հասել:

6-11-րդ դդ. հայկական նկարագրող ձեռագրերի մեջ գրեթե չկան առնվազն երկու նմուշներ, որոնց ձևավորումը կարելի լիներ վերագրել նույն մանրանկարչին: Սա նշանակում է, որ այդ վարպետների ստեղծած մեծ ժառանգությունից պահպանվել է շատ փոքր մասը, այն է՝ յուրաքանչյուր նկարչի ոճի մասին կարելի է դատել միայն մեկական ձեռագրով:

<sup>78</sup> S. Der Nersessian, L'Art Armenien des origines au XVII siecle, p. 218, fig. 166.

<sup>79</sup> The Medieval Artist at Work, p. 21.

<sup>80</sup> Ibid, p.30-32, pl. VI, fig. 5.

Առայժմ միակ բացառությունը կազմում է Հովհաննես Սանդղկավանեցին /1010°-1070° թթ./, որի ծաղկած հատորներից մեզ են հասել երեք Ավետարաններ:

12-րդ դարի հայ մանրանկարիչների համաստեղության մեջ կարելի է առանձնացնել շորու անուններ, որոնց գործունեությունը առնչվում է Կիլիկիայի հայկական թագավորության տարածքի հետ, և որոնց ժառանգության վերաբերյալ տեղեկությունները 11-րդ դարի համեմատ նույնանուական չեն:

Բարեբախտաբար, հայտնի են Կոստանդին Կոշիկ (1125°-1195° թթ.) մանրանկարչի ծաղկած ձեռագրերը: Կոստանդինը հավանորեն, U. Տեր-Ներսեսյանի ենթադրությամբ, եղել է Հեթումյան ընտանիքի իշխանների սիրած արվեստագետը: Ըստ Նորայր արքեպոս Պողարյանի, Կոստանդինից մեզ են հասել չորս, իսկ U. Տեր-Ներսեսյանի համաձայն՝ երեք նկարագրություններ: Կոստանդինը մասնակցել է հավանորեն Սկևոյի վանքում /Կիլիկիա/ 1173 թ. գրիչ և մանրանկարիչ Գրիգորի ընդօրինակած Ավետարանի ձևավորմանը: Այդ ձեռագիրը 1915 թվականից առաջ պահպել է Տիգրանակերտում, և նրա պահպելու այժմյան վայրը հայտնի չէ: 1173-1174 թթ. Հոռմկլայում, հայոց կաթողիկոսի աթոռանիստում, Գրիգորն ընդօրինակել է մեկ այլ Ավետարան, որը 1915 թ. առաջ գտնվել է Թոքատում և նույնապես կորնած է: Գրիգորի՝ Սկևոյում ընդօրինակած ու ձևավորած և, ըստ որում, մյուս մեզ հասած միակ մատյանը ընդգրկում է Գրիգոր Նարեկացու «Մատյան Ողբերգության» պոեմը (Մատենադարան, ձեռ. 1568) և վերաբերում է 1174 թ.:

Նարեկի ձևավորող Գրիգորը հաճախ է նույնացվում անվանակցի հետ, որը ծաղկել է 1197-1198 թթ. նախկինում Լվովի Հայկական Արքեպիսկոպոսարանի գրադարանում<sup>81</sup>, իսկ այժմ՝ Գմեզնոյում (Լեհաստան) պահպող Ավետարանը<sup>82</sup>: Այս ձեռագիրը սկսել է նկարագրություն Մլիճի վանքում, ապա վերջացվել Սկևոյում, և այդ պատճառով հատորի մանրանկարիչը ստացել է «Գրիգոր Մլիճեցի» պայմանական անունը մասնագիտական գրականության մեջ: Նրա աշակերտ Գրիգոր Սարկավագը ձեռագրերից մեկում իր ուսուցիչն անվանում է «Սկևոյի ամենահայտնի գրիչը»<sup>83</sup>: Սկևոյում Գրիգոր Մլիճեցին 1215 թ. սկսել է ծաղկել իր վերջին Ավետարանը (Սպահան, Հայկական Ամենափրկիչ վանքի հավաքածու, ձեռ. 546/25), բայց առաջացած տարիքում մահացել է, և Գրիգոր Սարկավագը վերջացրել է այն հաջորդ տարի Տարտում<sup>84</sup>: Վերջինս այն վարպետն է, որի 1215 թ. մահվան պատճառով կիսատ մնացած Ավետարանը ծաղկել-վերջացրել է հաջորդ տարի: Հայ գրքարվեստի պատմության մեջ սա թերևս առաջին և հնագույն դեպքն է, եթե արձանագրվում է մանրանկարչի մահվան ճշգրիտ թվականը:

Գրիգոր Մլիճեցի մանրանկարչի մեկ այլ ժամանակակցից՝ գրիչ ու մանրանկարիչ Կոզմայից մեզ են հասել չորս նկարագրություններ՝ 1166 թ. Հոռմկլայի Ավետարանը

<sup>81</sup> Sliv S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, p. 13, 16-18, 36-37.

<sup>82</sup> Das Lemberger Evangeliar, Eine wiederentdeckte armenische Bilderhandschrift des 12. Jahrhunderts, Hrsg. von G. Prinzing und A. Schmidt (Sprachen und Kulturen des christlichen Orients, Bd. 2), Wiesbaden, 1997.

<sup>83</sup> Sliv S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, p. 37.

<sup>84</sup> S. Der Nersessian, A. Mekhitarian, Armenian Miniatures from Isfahan, p. 30, fig. 7-11.

(Մատենադարան, ձեռ. 7347)<sup>85</sup>, 1205 թ. Խարբերդում ընդօրինակված Ավետարանը (Վենետիկ, Մխիթարյան Միաբանության գրադարան, ձեռ. 938)<sup>86</sup>, Խարբերդի մոտ Բարզանցա վաճրում 1219 թ. գրված Ավետարանը (Մատենադարան, ձեռ. 7734)<sup>87</sup> և նախկինում Կեսարիայում պահվող և կորած համարվող, բայց իրականում Դետրոյտի Ալեք Մանուկյան թանգարանում գտնվող Ավետարանը, որը մինչև 1269 թ. ստեղծվել է Հոռմկլայից հյուսիս-արևմուտք գտնվող Ռաբան ավանում:

Հաջորդ դարի ձեռագրական հունձքը այսօր տարօրինակ պատկեր է ներկայացնում: Մասնագիտական առումով բավականին հմուտ մանրանկարիչներից առանձին դեպքերում մնացել են մեկական մատյաններ, բայց երբեմն նաև չորսից ավել ձեռագրեր:

Այսպես, օրինակ, 13-րդ դարի մանրանկարիչ Մարգարե Աքեղայի ողջ ժառանգությունից մնացել է միայն 1211 թ. նրա ծաղկած Հաղպատի Ավետարանը (Մատենադարան, ձեռ. 6288)<sup>88</sup>:

Կարին քաղաքի 12-13-րդ դդ. սահմանագծի հայ գրքարվեստի վարպետների մասին գաղափար ենք կազմում միայն երեք ձեռագրերով, որոնցից առավել նշանավորը 1232 թ. Թարգմանչաց Ավետարանն է (Մատենադարան, ձեռ. 2743)<sup>89</sup>: Թեև ուսումնասիրողները այս ձեռագրի ձևավորող Գրիգորի Վուճին են վերագրում մյուս երկու մատյանների պատկերագրումը, բայց մեզ թվում է, որ Գրիգոր Ծաղկողի բացառիկ արվեստի մասին գաղափար ենք կազմում միայն Թարգմանչաց Ավետարանի մանրանկարչությամբ:

Հրաշքով կամ պատահականությամբ 13-րդ դարից պահպանվել են վեց Ավետարաններ, որոնց ձևավորմանն իր մասնակցությունն է բերել այդ ժամանակի լավագույն վարպետներից Իգնատիոս Հոռոմոսին<sup>90</sup>, նույն ժամանակաշրջանից մեզ են հասել ճշգրիտ թվական ունեցող նաև յոթ ձեռագրեր, որոնց նկարագրումն իրականացրել է Թորոս Ռուպինը իր գործընկերների և աշակերտների հետ: Նրա վրձնին են վերագրում ևս երեք այլ ձեռագրեր և երկու պատառիկ<sup>91</sup>: 1256-1268 թթ. ստեղծված այս ճշգրիտ թվագրում

<sup>85</sup> Տե՛ս S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, p. 3-12, 21, 25, L. Ազարյան, Կիլիկյան մանրանկարչությունը XII-XIII դդ., նկ. 40-49:

<sup>86</sup> Տե՛ս M. Janashian, Armenian Miniature Painting, p. 50-53, pls. 59-67.

<sup>87</sup> Տե՛ս T. A. Измайлова, Мурганская образец в армянской миниатюрной живописи. Труды Государственного Эрмитажа, Культура и искусство народов Востока, т. 5, 1961, с. 76-97, илл. 2, 4, 6, 8, 10, 12; ее же, Мастер и образец, Ромклайская модель, вторая половина XII—начало XIII века., «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 3, 1989, լ. 189-191:

<sup>88</sup> Տե՛ս Վ. Մարգարյան, Մարգարե, Երևան, 1990:

<sup>89</sup> Տե՛ս Լ. Չուգասյան, Գրիգոր Ծաղկող, Երևան, 1986:

<sup>90</sup> Տե՛ս Ն. արքեպո. Ծովական /Պողարյան, Հայ նկարիչներ, լ. 15-17:

<sup>91</sup> Լ. Կոգասյան, Искусство Византии, стран Латинского запада и наследие Тороса Роделия. The 17th International Byzantine Congress, Dumbarton Oaks/ Georgetown University Washington, D. C., August 3-8, 1986, Abstracts of Short Papers , p.61- 63; Խոյնի, «Ծննդյան» թեման Թորոս Ռուպինի արվեստում: «Թանքեր Մաքենադարսի», հաֆ.15, Երևան, 1986, լ. 145-172; Խոյնի, Դրվագներ Թորոս Ռուպինի ժառանգությունից: «Թազմավեպ», հափ. CXLV, թիվ 1-4, Ս. Ղազար-Վենեսիլի, 1987, լ. 253-286; Խոյնի, «Խաչելության» թեման Թորոս Ռուպինի արվեստում: «Հանդես ամսօրյա», թիվ 1-12, Վիեննա, 1988, լ. 191-218; Խոյնի, Տворчество Тороса Роделия и византийская монументальная живопись. «Բանքեթ Համապարսկի», թիվ 3, Երևան, 1989, լ. 103-108; Խոյնի, «Ղազարոսի հարության» թեման Թորոս Ռուպինի արվեստում: «Թազմավեպ», հափ. CXLVIII, թիվ 3-4,

Այդ հարցում կարելի է առանց դժվարության համոզվել՝ ուշադրություն դարձնելով նրա պատկերագարդած ձեռագրերի թվականներին: 1307 թ. հետինակել է Վենետիկի Միսիթարյանների թիվ 1917 Ավետարանի մանրանկարները և Սարգսի ու այլ մանրանկարների հետ մասնակցել այժմ Լոս Անջելեսի համալսարանի (UCLA) գրադարանում (Արտ. Ms. 1) պահպան Ավետարանի ձևավորմանը:

1317 թ. նա անձամբ կամ ուրիշ ծաղկողների հետ զարդարել է չորս ձեռագրեր: 1318 թ. ձևավորել է Երկու և 1321 թ. այլ Երկու մատյաններ: Ինչպես նկատվել է, 1317-1318 թթ. Օրագործութեալթյան զագաթնակետն էն<sup>93</sup>: 1331 թ. հետո, 1346 թ., նա ծաղկել է հաջորդ մեզ հասած ձեռագիրը: Անկարելի է, որ այսքան շատ ստեղծագործած մանրանկարին ոչինչ արած չլիներ 1307 թ. հետո մինչև 1317 թ. կամ 1331-1346 թթ. միջև ընկած տարիներին:

U. Ղազար-Վելինյան, 1990, № 437-459; Խոյեսի, Миниатюра Тороса Рослина – «Переход через Красное море», «Լրաբեր հասարական գիտությունների», թիվ 10, Երևան, 1990, № 32-43; Խոյեսի, Творчество Тороса Рослина и византийская книжная живопись.. The XVIII th International Congress of Byzantine Studies, Moscow State University, Moscow, August 8-15, 1991. Summaries of communications, p. 232-233; Idem, Cilician Book Painting: Miniatures of Toros Roslin and Italian Art, Atti del Quinto Simposio Internazionale di Arte Armena, Venezia- Milano-Bologna-Firenze, 1988, 28 maggio-5 giugno, San Lazzaro-Venezia, 1992, p. 321-332; Idem, The Art of Toros Roslin. National Gallery of Art, CENTER 13,: Record of Activities and Research Reports, Washington D. C., 1993, p. 53-54; Խոյեսի, Թորոս Խոյինի «Թովմայի անհավաքության» մանրանկարը: «Բանրեր Մագեստարանի», հաք. 16, Երևան, 1994, № 31-43; Խոյեսի, On the Portrait of Prince Levon (Yerevan, Ms. 8321). Revue des Etudes Armeniennes, t. 25, Paris, 1994-1995, p. 299-335; Idem, Once again on the Subject of Prince Levon's Portrait. Journal of Society of Armenian Studies, vol. 10, Dearborn-Michigan, 1999, p. 47-69; Idem, On a Portrait of Prince Levon and Princess Keran. Journal of Armenian Studies, vol. VI, No.2, Boston, 2000-2001, p. 73-88; Խոյեսի, Творчество Тороса Рослина в контексте культурных связей киликийской Армении XIII, Автореферат диссертации, Москва, 2001; Idem, L'Ouvre de Toros Roslin et l'enluminure byzantine, p. 399-424; Idem, Armenisk bokmaleri Kilikia i 1100-og 1200-arene". Kirke & Kultur, Eksotisk Kristen Kunst, 4, Oslo, Norway, 2003, p. 339-350.

<sup>92</sup> Th. F. Mathews and A. K. Sanjian, Armenian Gospel Iconography, p. 71.

<sup>93</sup> Ibid. p.67-68.

Պահպանված նկարագրությունը նշում է 14-րդ դարի մանրանկարիչ Սարգիս Պիծակը: «Նրա թողած մատյանների առատությունը, Ա. Ն. Սվիրինի խոսքերով ասած, «բացառիկ երևույթ է զբարվեստի պատմության մեջ»<sup>94</sup>: Նրա հետ է աղերսվում Ա. Ն. Սվիրինի համաձայն՝ տասնութ<sup>95</sup>, ըստ Նորայր արքեպոս. Պողարյանի՝ տասնյոթ<sup>96</sup>, ըստ Վ. Ղազարյանի՝ երեսունյոթ, և մեր կարծիքով՝ ևս տասնմեկ, այսինքն՝ շուրջ քառասունյոթ մատյանների ձևավորումը<sup>97</sup>: Ա. Տեր-Ներսիսյանը նշում է, որ մոտավորապես հիսուն ձեռագրեր են ստորագրված նրա կողմից կամ կարող են վերագրվել նրան<sup>98</sup>: Այս ահոելի թիվը պայմանավորված է այն հանգամանքով, որ բազմաթիվ հատորների մեջ մանրանկարիչը պատկերագրողել է միայն մանրանկարների ոչ հիմնական մասը կամ միայն ավետարանիչների դիմանկարները և, բացի այդ, երկար կյանք է ունեցել ու ստացել մեծ թվով պատվերներ:

Այսպիսի զարմանալի քանակության կողքին ցավալի է արձանագրել այն փաստը, որ նույն դարի ընտիր վարպետներ Կիրակոս Թավրիզեցուց պահպանվել է միայն մեկ, իսկ Մխիթար Անեցուց՝ երկու ձեռագրեր<sup>99</sup>:

Հաջորդ դարերի ծաղկողների մատյանները ավելի շատ են պահպանվել: Ուշագրավ է, որ Վասպուրականում 1432-1482 թթ. և գուցե հետո ապրած մանրանկարիչ Մինասի ձևավորած հատորներից մեզ են հասել երեսունութ ձեռագրեր<sup>100</sup>, այսինքն պետք է ենթադրել, որ նա ծաղկած լիներ գուցե Սարգիս Պիծակի չափ կամ ավելի մեծ թվով մատյաններ: 1454 թ. նա զարդարել է երեք, իսկ 1456 թ.՝ չորս ձեռագրեր: Նկատի առնելով Մինասի զարդարած 1452 թ. և 1455 թ. երկու Ավետարանները, 1458 թ. Սաղմոսագիրը-Աղոթագիրը, ինչպես նաև 1452-1457 թթ. ընթացքում ընդողինակած ճշգրիտ թվագրում չունեցող Հայսմավուրը, նաև 1460 թ. Շաշոցը, 1461 թ. Ավետարանը, 1462 թ. երկու ձեռագրերը, 1464 թ. մյուս երկու մատյանները, 1465 թ. Շարակնոցը, 1466 թ., 1467 թ. և 1469 թ. Ավետարանները, կարելի է ասել, որ ընդհանուր առմամբ 1452-1469 թվականներին նա վրձնել է քսանմեկ ձեռագրերի պատկերները<sup>101</sup>, այսինքն այդ տարիները նրա գործունեության զագաթակետն են: Առնվազն հիսունմեկ տարվա ստեղծագործական ակտիվություն ունեցած վարպետը ամենաքիչը յոթանասուն-յոթանասունհինգ տարի պետք է որ ապրած լիներ:

<sup>94</sup> А. Н. Свириш, Миниатюра древней Армении, Москва-Ленинград, 1939, с. 81.

<sup>95</sup> Նույն գիրում:

<sup>96</sup> Նորայր արքեպոս. Շովական (Պողարյան), Նայ Ակարիչներ, էջ 58-64:

<sup>97</sup> Վ. Ղազարյան, Սարգիս Պիծակ, էջ 141-142, ինչպես նաև այս գրքի մասին մեր գրած գրախոսականը, «Լրաբեր հասարակական գիրությունների», Երևան, 1981, թիվ 6, էջ 116-118:

<sup>98</sup> S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, p. 142.

<sup>99</sup> S. Der Nersessian and A. Mekhitarian, Armenian Miniatures from Isfahan, p. 74, 78, 85, 86, fig. 51-63; Ե. Վարդանյան, Մինաս մանրանկարչի գեղարվեստական ժառանգությունը: «Պաֆմա-Բանասիրական Հանդես» (Երևան), 1999, 2-3, էջ 268-282:

<sup>100</sup> S. Der Nersessian and A. Mekhitarian, Armenian Miniatures from Isfahan, p. 109; Ե. Վարդանյան, Մինաս մանրանկարչի գեղարվեստական ժառանգությունը: «Պաֆմա-Բանասիրական Հանդես» (Երևան), 1999, 2-3, էջ 271-281:

Թորոս Ռուլինի ծաղկած մատյաններում նրա ժառանգության անքակտելի մասն են կազմում նաև արվեստագետի ձեռքով գրված ընծայականներն ու հիշատակարանները: Չսփածո բնույթ ունեցող ընծայականները վկայում են նրա բանաստեղծական խառնվածքի ու կարողությունների, իսկ հիշատակարանները՝ պատմագրելու ձիրքի մասին<sup>102</sup>: 1267-1268 թթ. Մալաթիայի Ավետարանում Ռուլինի թողած հիշատակարանը մեծ կարևորություն է ներկայացնում 13-րդ դարի իրադարձությունները հետազոտող պատմաբանների համար: Նկարիչն այստեղ նշում է ձեռագրի ընդօրինակման տարին Եզիատոսի մամլուքների՝ Անտիոք գրավելու, բազմաթիվ մարդկանց սպանվելու և գերեվարվելու, տաճարների հրո նարակ դառնալու մասին: Խոր ցավ զգալով այդ տաճարների կործանման համար, Ռուլինը հմայված վերջիններիս գեղեցկությամբ, այն բնորոշում է «հրաշատեսկ վայելչութիւն գեղոյ» բառերով: Ըստ Ակարչի, այդ տաճարների գեղեցկության «հրաշատեսկ» վայելչությունը ոչ ոք չէր կարող նկարագրել: Թորոս Ռուլինը հաղորդում է, որ Անտիոքի անկման լուրը մեծ «Երկիր, զարհութանք» առաջ բերեց շատ երկրներում և հատկապես «կիլիկեաց աշխարհում»<sup>103</sup>:

Թորոս Ռուլինի հիշատակարաններում արտահայտվել է ոչ միայն նրա վերաբերմունքը իր ժամանակի իրադարձությունների նկատմամբ: Այսուհեղ նաև տաղիս է նաև իրեն շոշապատող մարդկանց բնութագրերը: Որոշ ձեռագրերի հիշատակարաններում նկարիչը ստեղծում է Կաթողիկոս Կոստանդին Բարձրբերդու գրական հետաքրքիր դիմանկարը: 1256 թ. Ավետարանում Ռուլինն իր հովանավորին անվանում է «հայր ոռբոց» և ավելացնում, որ «աղբիւր էր նա բարեաց»<sup>104</sup>: Նույն ձեռագրում նա գրում է, որ Կոստանդին Ա-ն իր վարքով զերում էր բոլորին և այնքան սիրված էր ամենքից, որ նույնիսկ երկրներ նվաճած

<sup>102</sup> Տիւ Լ. Ա. Խոսկելյան, Թորոս Ռոստիկի ծեռացրի վերջին հաւաքովանը, էջ 59, 60:

<sup>103</sup> Տես Հայոցին ծերացրելու հիշատակերպելու, ԺԳ ուսը... էջ 359.

<sup>104</sup> Տե՛ս Ա. Սիրովի աշխատանքը, Մայր գուցիւ..., էջ 139; Հայելին ձեռացնելով հերապուստութեան, ժողովը... էջ 284.

միապետները նրան տեսնելիս՝ ընդառաջ էին գնում: Գ. Հովսեփյանը կարծում է, որ սա ակնարկություն է Եզիպտոսի և Հայաստանի մի մասի ու Միջագետքի սովորականներ Մելիք Քեմլի և Մելիք Աշրաֆի փառավոր ընդունելությանը իրենց բանակում, որը նկարագրում է 13-րդ դարի հայ պատմիչ Կիրակոս Գանձակեցին իր «Հայոց պատմության» մեջ<sup>105</sup>: Մեզ թվում է, որ Ռուսինը նկատի ունի կաթողիկոսի հանդիպումը մոնղոլների Հովանու խանի հետ: Վարդան պատմիչը գրում է, որ մոնղոլները երբ գրավում են Միջագետքը, Կոստանդինին Բարձրբերդցին մեկնում է Եղեսիա՝ Հովանու խանի մոտ, և օրինում վերջինին: Խանի ընդունելության վերաբերյալ պատմիչը նշում է, որ կաթողիկոսը «սիրեցաւ ի նմանէ»<sup>106</sup>:

1260 թ. ձեռագրում Ռուսինը կաթողիկոսին նկարագրում է որպես արտակարգ բարի հոգևորականի, կարենից և ուշադիր՝ մոտիկ ու անծանոթ մարդկանց, հայրենակիցների և օտարերկրացիների, նաև աղքատների ու կարիքավորների նկատմամբ: Նկարիչն իր մեծ բարեկամին բնորոշում է որպես գրքասեր անձնավորության, որը Հին ու Նոր Կոստանդին բովանդակող մատյաններ էր հավաքում և ուկե կամ արծաթե անոթներ<sup>107</sup>, սպասք, եկեղեցական իրեղնեններ նվեր ստանալով բոլորը ընծայում էր մենաստաններին ու տաճահներին<sup>108</sup>:

Իր հիշատակարաններում Ռուսինը հաճախ է անդրադառնում Հեթում Ա թագավորին, նրա կնոջը՝ Զապել թագուհուն, և նրանց որդուն՝ Լևոն արքայազնին: Երրուսաղեմի 1262 թ. Ավետարանում նկարիչը նշում է, որ Լևոնը վարժով նման է իր հորը: Վարդետն ապագա արքային բնորոշում է որպես մի մարդու, որը սիրում է ճշմարտությունը և ատում ամեն տեսակ անիրավություն:

Թորոս Ռուսինի հիշատակարանները կարևոր նշանակություն ունեն պատմական անձանց ծագումնաբանության քննության տեսանկյունից: 1256 թ. և 1260 թ. ձեռագրերում նկարիչը տալիս է Կոստանդին Բարձրբերդցու մերձավորների անունները, իսկ 1265 թ. մատյանում նշում պատվիրատուի՝ Կեռան թագուհու ընտանիքի անդամներին: 1265 թ. Ավետարանում նա արձանագրում է իր ուսուցիչներից մեկի՝ Կիրակոսի անունը, բնորոշելով նրան որպես «չքնաղագեղ գոչի»: Նույն տեղում, առանց անունները տալու, խնդրում է հիշել իր ծնողներին, եղբայրներին, քույրերին, զավակներին: Միայն մեկ եղբոր՝ Անտոնի անունն է հանդիպում նկարչի հիշատակարաններից մեկում /1256 թ. Ավետարանում/<sup>109</sup>: 1266 թ. Մաշտոցի մեջ մանրամասնորեն արձանագրված են պատվիրատուի՝ Վարդան Եպիսկոպոսի հարազատների անունները: Թորոս Ռուսինը նշում է, որ Վարդանը, որպես Կոստանդին Բարձրբերդցու աշակերտ, շատ սիրված է եղել ուսուցչի կողմից իր «զգոնութեան եւ քաջութեան» համար:

Վերոհիշյալից երևում է, որ պատմական անձանց գովաբանումը կարևոր տեղ է զբաղեցնում Ռուսինի հիշատակարաններում: Դրանով իսկ կամ անկախ դրանից նկարչի գոա-

<sup>105</sup> Տե՛ս Գ. Յովսեփյան, Կոստանդին Ա կաթողիկոս..., լ. 26:

<sup>106</sup> Տե՛ս Մեծին Վարդանայ Բարձրբերդեցոյ Պապութիւն գիեղերական, ի լոյս ընծայեաց Ս. Էմին, Մոսկվա, 1861, լ. 198:

<sup>107</sup> Տե՛ս Ն. Պողարեան, Մայր ցուցակ..., լ. 18:

<sup>108</sup> Տե՛ս Ա. Սիրոմեան, Մայր ցուցակ..., լ. 139: Հայերևն ձեռագրերի հիշաբակարաններ, ԺԳ դար..., լ. 284-287:

<sup>109</sup> Տե՛ս Ա. Սիրոմեան, Մայր ցուցակ..., լ. 140: Հայերևն ձեռագրերի հիշաբակարաններ, ԺԳ դար..., լ. 285:

Առհասարակ վաղ քրիստոնեության սկզբնական շրջանի հայ հիմ արվեստագետների, օրինակ՝ ճարտարապետների, քանդակագործների, մանրանկարիչների ոիմանկարները չեն պահպանվել: 6-7-րդ դարերի Զվարթնոցի տաճարի քանդակներում երևացող և զոր-ծիքները բոնած մարդկանց հարթաքանակները դեռևս պարզ չեն, թե արդյոք ներկայացնում են այդ կառույցը կերտած քարզործ վարպետներին, թե <sup>110</sup>ոչ:

Հայ մանրանկարիչների հոկայական թվի համեմատությամբ զարմանալիորեն թիւ են մեզ հասած մանրանկարիչների դիմանկարները կամ ինքնանկարները:

Ըստ Հայոց պատմության՝ Արքայի կառավագական կարգավիճակի խոր ձևափոխման հետ են աղերսվում մասրանկարիչների դիմանկարների 12-րդ դարից սկսվող Շերմուծումը արևմբռ-լան գորարվեստում<sup>111</sup>:

Հայ արվեստում առհասարակ նկարչի առաջին ինքնանկարը Սարգիս Փառշիկի (Փարշիկի) որմանանկարն է Առիի Ս. Փրկչի եկեղեցում (1193 թ.)<sup>112</sup>, որը նաև ներկայացված է Մատթեոս ավետարանիչի առաջ ծնկած աղոթելիս<sup>113</sup> (Ակ. 3): «Փառշիկ» կամ «Փարշիկ»

<sup>110</sup> С. Х. Мпацакашвили, Звартноц, Памятник армянского зодчества V-VI веков, Москва, "Искусство", 1971, (Памятники раннего искусства), с. 52-54, илл. 50-53.

<sup>111</sup> Ch. de Merindol, *Les peintres de l'abbaye Corbie au XIIe siècle. Artistes, artisans et production artistique au Moyen Age*, Colloque international, p. 325-326, fig. 9.

<sup>112</sup> Տիւ Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության, Երևան, 1942, էջ 166; Ս. Ա. Ավագյան, Ով Լ. Մանուկի լրապանագրում հիշապակված Մարգիս Փարտիկը: Պակմա-Բանասիրական հանդես, 1977, N 1, էջ 221-230; S. Der Nersessian, L'Art Armenien des origines au XVIIe siecle, p. 206.

<sup>113</sup> Գունդակուր վերաբերյալներ լրեն Documenti di Architettura Armena, ANI.12, San Lazzaro-Venezia, 1984, p. 50.

նշանակում է Ակարիչ: Այս բառը վկայված է նույնիսկ հայկական այդ ժամանակի ձեռագրերից մեկում:

Առիջի պատկերն ուղեկցող մակագրությունից պարզ է դատնում, որ Ակարիչը խնդրում է Մատթեոս ավետարանչից՝ բարեխոսելու Քրիստոսի առաջ իր հոգու փրկության համար: Սարգիս Փառշիկի անվանն առնչվող բացառիկ հանգամանք է այն, որ Սամահնի վանքում 1216 թ. մի խաչարձանի կողքին պահպանվել է նրա տապանաքարը, որը եզակի դեպք է հայ արվեստում: Դժբախտաբար այդ շիրմաքարի վրա նշված չէ Ակարչի մահվան թվականը: Ելանելով այն հանգամանքից, որ Սարգիս Փառշիկը 1216 թ. հոդ է Ավիրել Խծկոնքի վանքին, Թ. Թորամանյանը եզրակացնում է, որ Ակարիչը այդ ժամանակ առաջացած տարիքում պետք է լիներ, այսինքն՝ շուրջ յոթանասուն տարեկան<sup>114</sup>: Հավանորեն Սարգիս Փառշիկը վախճանվել է դրանից փոքր-ինչ ուշ:

Ժամանակագրական կարգով երկրորդ ինքնանկարը հանդիպում է Ութ մանրանկարիչների Ավետարանի (Մատթեանդարան, ձեռ. 7651) Խաչելության մանրանկարում<sup>115</sup> (Ակ. 4): Այստեղ՝ խաչի ներքևի մասում ցուցադրված է ծնկաչոք և ձեռքերը աղոթելու շարժումով վեր բարձրացրած մի մարդ, որը, Ս. Տեր-Ներսեսյանի կարծիքով, ինքը մանրանկարիչներն անունները դժբախտաբար չեն պահպանվել և հայտնի է միայն, որ 1320 թ. հատորը ծաղկել-վերջացրել է Սարգիս Պիծակը: Խաչելության մանրանկարում ներկայացված Ակարիչը հազիվ թե Սարգիս Պիծակը լինի, քանի որ վերջինս ոչ միայն իրեն բոլորովին այլ կերպ և մեծ չափերով է մի քանի անգամ պատկերել, այլև միշտ ինքնանկարների կողքին թողել է իր անունը:

Հայ մանրանկարիչների դիմանկարների քննության տեսակետից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում արքեպիսկոպոս Հովհաննես արքայեղբորը ցուցադրող մանրանկարները: Այս անձնավորությունը եղել է իր ժամանակի ամենազարգացած մարդկանցից մեկը և մեծ չափով նպաստել ձեռագիր գրքի ընդօրինակությունների ծավալմանը: Նրա պատվերով գրվել ու նկարագրվել են բազմաթիվ մատյաններ, և նա անձամբ ընդօրինակել ու հավանաբար ձևավորել է շատ հատորներ: Նրա հետ ձեռագրեր ծաղկած գրիչներ և մանրանկարիչներ Ստեփանոս Վահկացին, Գրիգոր Պիծակը և Կոստանդին Ավոցին մատյաններից մեկի հիշատակարանում նշված են որպես Հովհաննես արքայեղբոր աշակերտներ<sup>116</sup>:

Հովհաննես արքեպիսկոպոսի դիմանկարներից պահպանվել են չորս պատկերներ, և դրանք ինքնանկարներ չեն: Դրանցից առաջինը հանդիպում է Բարձրբերդի (Կիլիկիա) մոտ գտնվող վանքերից մեկում ընդօրինակված Հին և Նոր Կտակարաններն ընդգրկող

<sup>114</sup> Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարպարապետության, Երևան, 1942, լ. 2 166:

<sup>115</sup> S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia..., p. 160, fig. 468.

<sup>116</sup> Գունավոր վերաբայությունը պետք է Տ. Տեր-Ներսեսյան, L'Art Armenien des origines au XVIIe siècle, p. 113.

<sup>117</sup> Տե՛ս Լ. Ռ. Ազարյան, Կիլիկիան մանրանկարչությունը XII-XIII դդ., լ. 2 77; Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia..., p. 78.

մատյանի (Մատենադարան, ձեռ. 4243) մեջ (թ. 15ա)<sup>118</sup> (Ակ. 5): Ամենայն հավանականութ-  
մատյանի (Մատենադարան, ձեռ. 4243) մեջ (թ. 15ա)<sup>118</sup> (Ակ. 5): Ամենայն հավանականութ-  
յամբ Հիսուս կանքում ստեղծված այս մատյանի պատվիրատու Հովհաննես արքաեղ-  
յանը կանքու պահպան է, իսկ գրիչը՝ Սուեփանոս Վահկացին, որը հավանաբար և մանրանկարիչն է կամ  
բայրն է, իսկ գրիչը՝ Սուեփանոս Վահկացին, որը հավանաբար և մանրանկարիչն է կամ  
մանրանկարիչներից մեկը: Այստեղ մեզ հետաքրքրող պատկերում, դեռևս եպիսկոպոսա-  
կան աստիճան ունեցող, Հովհաննես արքաեղբայրը Շերկայացված է Հովհաննես ավե-  
լան տարանչի առջև ծնկաչոք, և ավետարանիչը օրինում է ճրան<sup>119</sup>: Վերջինից Հովհաննես  
արքաեղբայրը խնդրում է բարեխոսու լինել Անեղ Պատաստանի օրը:

արքալեպայրը խաղողի համար կատարելու համար կարծես կրկնված է Վերը քննված Սարգիս Փարշիկի 2ի կարելի չնկատել, որ այստեղ կարծես կրկնված է Վերը քննված Սարգիս Փարշիկի որմնանկարի պատկերագրությունը: Ըստ Երևույթին այս կարգի նկարները ժամանակին բավականին տարածված են եղել:

բավականին տարածված են աղմ։  
Լիսոնկա Վանքի ձեռագրի մանրանկարների քննությունից ելնելով, Ա. Տեր-Ներսեսյանը գտնում է, որ մատյանի մանրանկարիչը Հովհաննիկ է, որի անունը պահպանվել է 1273 թ. Ավետարանի (Ստամբուլ, Թուֆանփու Սարայ թանգարան, ձեռ. 122)<sup>120</sup> մեջ։

Գոների վանքում 1263 թ. ընդօրինակված Ավետարանը (Վաշինգտոն, Freer Gallery of Art, 56.11) մեզ ծանոթացնում է Հովհաննես արքաեղբար երկրորդ դիմանկարի հետ (թ. 293ա)<sup>121</sup>: Այս ձեռագրի պատվիրատուն նորից Հովհաննես արքաեղբայրն է, իսկ գրիչը՝ Թորոս քահանա: 1263 թ. Ավետարանի հիշատակարանում Հովհաննես արքաեղբայրը նշում է, որ մատյանը նկարագրված է տարբեր գրիչների կողմից, բայց չի նշում նրանց անունները<sup>122</sup>: Նրա հետ աշխատած մի քանի գրիչների անուններ նաև հիշատակում է այժմ Մատենադարանում պահվող թիվ 196 ձեռագրում, որը ստույգ թվական չունի: Նա խնդրում է հիշել իր աշակերտներ Ստեփանոս Վահկացուն, մատյանը ծաղկողին՝ Գրիգոր Պիծակին, և ընդօրինակող գրիչին՝ Կոստանդին Ավզցուն<sup>123</sup>:

Բարեխախտաբար 1263 թ. Ավետարանի պատկերներից երեքի՝ Մարկոս, Ղուկաս, Հովհաննես ավետարանիչների դիմանելարների տակ Կոստանդինը ճշել է իր անունը, և այդպիսով իմանում ենք, որ նա մասնակից է մատյանի ձևավորման աշխատանքներին և թե ինչ ոճով է նա աշխատել: Այդ ոճը միանգամայն տարբեր է այն ոճից, որով կատարված է Հովհաննես արքաեղբոր երկրորդ դիմանելարը: Վերջինս նրան ցուցադրում է սարկավագ ձեռնադրելու պահին: Դատելով ոճից՝ այս մանրանելարի հետինակը, մեր կարծիքով, Հովհաննեսին է, թեև Սեր-Ներսեսյանը զտնում է, որ դա Կոստանդինի գործն է: Հովհաննես արքաեղբոր և՛ առաջին, և՛ երկրորդ դիմանելարներում, ինչպես իրավացիորեն նշեալատում է Ս. Տեր-Ներսեսյանը, ճշգրտորեն, ամենայն մանրամասնությամբ վերաբա-

<sup>118</sup> Տե՛ս Լ. Ազարյան, Կիլիկյան մանրանկարչությունը XII-XIII դդ., Խ. 22; D. Kouymjian, Chinese Elements in Armenian Miniature Painting in the Mongol Period.- In: Armenian Studies, Etudes arméniennes. In Memorium Haig Berberian, Lisbon, 1986, p. 415-468.

<sup>119</sup> Գուշակը վերափոխութեան վեց Վ. Կազարյան, Ս. Մալուկյան, Մատենադարան, Արмянская рукописная книга VI-XIV веков (Матенадаран, Армянские рукописи VI-XIV веков), Том, Москва, 1991, с. 169-170; S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, p. 84, 158, fig. 307.

<sup>120</sup> Stiu S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, p. 85, fig. 307.

<sup>121</sup> Stéphane Nersessian, Armenian Painting in the Armenian Kingdom of Cilicia, p.6.

<sup>122</sup> Ibid, p. 63. Idem, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, p. 78-158.

<sup>123</sup> Ibid. p. 78, note 15.

դրված է նույն դեմքը<sup>124</sup>, ինչը վկայում է ստեղծագործության հեղինակի նույր դիտողականության և հմուտ դիմանկարիչ լինելու մասին։ Հովասափն այդտեղ հատուկ ուշադրություն է դարձրել արքաեղբոր Եպիսկոպոսական հանդերձավորման բաղկացուցիչ մասերին<sup>125</sup>։

Տարիներ անց ստեղծված Հովհաննես արքեպիսկոպոսի երրորդ դիմանկարում նկարիչը նրան ցուցադրում է ալեհինը, տարիքն առած մարդու արտաքինով և արքեպիսկոպոսական շատ շքեղ զգեստներով։ Այդ պատկերը մաս է կազմում Մատենադարանում գտնվող այն Ավետարանի (ձեռ. 197)<sup>126</sup>, որն առաջ համարվում էր 1287 թ. գործ։ Ս. Տեր-Ներսեսյանը համոզիչ կերպով ապացուցել է, որ այն ընդօրինակվել է 1289 թ.<sup>127</sup>։ 1289 թ. Հովհաննես արքեպիսկոպոսի մահից անմիջապես առաջ ծաղկված<sup>128</sup> այս ձեռագրի պատվիրատում ինքը արքաեղբայրն է։ Նա, ինչպես վկայում են Ավետարանի հիշատակարանները, նաև այդ ձեռագրի մի մասի գրիչն է<sup>129</sup>։

Ձեռագրի ամենավերջին պատկերը հանդիսացող Հովհաննես արքաեղբոր երրորդ դիմանկարում (թ. 341թ) նա ցուցադրված է քահանա ձեռնադրելու պահին։ Ըստ Ս. Տեր-Ներսեսյանի, երկու տարբեր մանրանկարիչների ձեռքի գործն են մատյանի ձևավորումները<sup>130</sup>։ Արքաեղբոր դիմանկարի կատարումը խիստ տարբերվում է այն պատկերներից, որոնք հեղինակել է Հովասափն, բայց առայժմ պարզ չեն, թե ով է այդ ստեղծագործության հեղինակը։

Ուստինասիրողները նկատել են, որ Հովհաննես արքաեղբոր զգեստը զարդարված է ոսկե վիշապով, որը, հավանաբար, չինական մետաքսի նմուշ է<sup>131</sup>։ Վերջինս, հավանաբար, բերվել է արքեպիսկոպոսի՝ մոնղոլների արքունիք այցելած եղբայրների՝ Սմբատ Գունդըստաբլի կամ Հեթում Ա-ի միջոցով<sup>132</sup>։

Ս. Տեր-Ներսեսյանի կարծիքով, Հովհաննես արքաեղբոր չորրորդ դիմանկարը պետք է համարել այն մանրանկարը, որը ներկայացված է տարիներ շարունակ Բրյուսելի Ֆերն-Սթոքլեթ հավաքածուի կազմում գտնված պատառիկ թերթի վրա<sup>133</sup>։ Այդ պատառիկը մի քանի տարի առաջ դարձել է Նյու Յորքի Փյերփոնթ-Մորգան գրադարանի սեփականությունը։

Վերոհիշյալ կարծիքը ներկայացնելու համար Ս. Տեր-Ներսեսյանին հիմք է տալիս պատկերի շրջանակի վրա ընթերցվող «Հովհաննես արքեպիսկոպոս» մակագրությունը։ Այս դիմանկարի մեջ արքաեղբոր զգեստը զարդարված է շուշան ծաղկով (fleurs-de-lis),

<sup>124</sup> Ibid, p.158.

<sup>125</sup> Ibid.

<sup>126</sup> Տե՛ս զունավոր վերաբարություն՝ Վ. Կազարյան, Ս. Մալուկյան, Մատենադարան, ս. 178, առ. 336; S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, p. 158, fig. 645.

<sup>127</sup> Ibid, p. 96-97

<sup>128</sup> Ibid, p. 93.

<sup>129</sup> Ibid, p. 96.

<sup>130</sup> Ibid, p. 97.

<sup>131</sup> D. Kouymjian, Chinese Elements..., p. 415-468.

<sup>132</sup> S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, p. 158.

<sup>133</sup> Ibid, p. 158, fig. 646.

որը թույլ է տալիս U. Տեր-Ներսեսյանին մտածելու այդ կտորեղենի սիցիլիական ծագման մասին և Կիլիկիայում առևտրական մենաշնորհներ ունեցող իտալացի վաճառականների ձեռքով բերված լինելու վերաբերյալ<sup>134</sup>:

Այս մանրանկարում գահին նստած Աստվածամոր ու նրա գրկի մանուկ Քրիստոսի առջև պատկերված են երեք անձինք, որոնք, U. Տեր-Ներսեսյանի կարծիքով, Մարածախտ Օշին ու նրա երկու որդիներ Կոստանդին ու Հեթում են: Վերջին երեք անձանց ինքնությունը անվանի գիտնականը որոշում է՝ եղելով մանրանկարի վրա մնացած հազիվ ընթերցվող գրերից: Այս կարծիքի օգտին են խոսում ներկայացված պատմական անձանց միջև եղած ազգակցական կապերը<sup>135</sup>: Նկատելի է, որ արքաեղբայրը ներկայացված է լուսապատճենով, որը բացակայում է նրա նախորդ դիմանկարներում: Ինչ վերաբերում է Մարածախտ Օշին, ապա, ինչպես գիտենք, նա պատվիրատուն է 1274 թ. Ավետարանի (Նյու Յորք, Փյերփոնթ-Մորգան գրադարան, ձեռ. 740)<sup>136</sup>, որի գրիչն է Կոստանդինը:

Ըստ U. Տեր-Ներսեսյանի, այս պատառիկը մաս է կազմում վերոհիշյալ Ավետարանի<sup>137</sup>, հետևաբար այն ստեղծվել է 1274 թվականին, ուրեմն կարելի է ասել, որ ժամանակագրական իմաստով միշանկալ դիրք է գրավում Հովհաննես արքաեղբայր երկրորդ ու երրորդ դիմանկարների միջև:

Խնդրո առարկա պատկերում Աստվածամայրը իր թիկնոցը տարածել է Օշինի ու նրա որդիների վրա, այսինքն՝ այստեղ գործ ունենք Գրության Աստվածամոր (Vierge de Misericorde) պատկերագրության հետ, որը ծանոթ է նաև Վասակ իշխանի (Հեթում Ա թագավորի եղբոր) պատվիրած շուրջ 1270-1280 թթ. ստեղծված Ավետարանի (Երուսաղեմ, Հայկական Պատրիարքարանի հավաքածու, ձեռ. 2568) մանրանկարով<sup>138</sup>:

Գրության Աստվածամոր պատկերագրության հնագույն նմուշը Սիենայի Պինակոտեկայում (Pinacoteca) պահվող Դուչչիոյի վրձնած փոքրիկ պատկերն է՝ ստեղծված մոտավորապես 1280 թ.: Ավելի վաղ նկարված 1274 թ. հայկական մանրանկարի գոյությունը չի նշանակում, որ Գրության Աստվածամոր պատկերագրությունը ծնունդ է առել Կիլիկիայում: Այդ հանգամանքը բացատրվում է Կիլիկիայում Ֆրանցիսկյան և Ռոմինիկյան միաբանությունների ներկայությամբ և իտալիայի տարածքում գործող հայկական մենաստանների առկայությամբ<sup>139</sup>:

Հովհաննես արքաեղբայր դիմանկարի քննությունը ցույց է տալիս, որ դրանց մեջ գրիչ և մանրանկարիչ արքեպիսկոպոսը չի ներկայացված նկարելու կամ ձեռագիր գրելու պահին: Այլ կերպ ասած, Գոների գրչատան դեկապարի և ուղղակիորեն մատյանների ընդունակումով գրաղվող գրքասեր ու արվեստագետ անձնավորությանը պատկերող այս

<sup>134</sup> Ibid, p. 158.

<sup>135</sup> Ibid, p. 158-159.

<sup>136</sup> Treasures in Heaven, Cat. 64, p. 193-194; V. Nersessian, Treasures from the Ark, p. 189-190.

<sup>137</sup> S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, p. 159.

<sup>138</sup> S. Der Nersessian, Deux exemples arméniens de la Vierge de Misericorde. In: Etudes Byzantine et Armeniennes - Byzantine and Armenian Studies, Louvain, 1973, p. 585-596.; Idem, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, p. 159, fig. 647.

<sup>139</sup> Ibid, p. 159.



Նկ. 1. Եսայի Նչեցին իր աշակերտների հետ.  
Եսայու մեկնություններն ընդգրկող ձեռագիր,  
1299 թ.

(Երուսաղեմ, Հայոց պատրիարքության  
հավածարու, ձեռգ. հմք. 365)



Նկ. 2. Դավիթ Անհաղթ, Դավիթ Անհաղթի  
«Սահմանը իմաստափառութեան» երկի  
1280 թ. ընդօրինակություն

(Երևանի Մագրենադարան, ձեռգ. հմք. 1746)



Նկ. 3. Սարգիս Փառշիկի (Փարզիկի)  
ինքնանկարը.

Որմնանկար Ասիի Ս. Փրկչի եկեղեցում (1193 թ.)



Նկ. 4. Անհայր մանրանկարչի ինքնանկարը.  
Ութ մանրանկարիչների Ավելարանի  
«Խաչելություն» մանրանկարը  
(Մագրենադարան, ձեռգ. հմք. 7651)




ծ իսլամայնորա  
ռածունքը եղացալի  
- և եթէ որպատկ  
է երանեացնարկ  
ուզայսամիւն .  
ուստեև հաստի  
հնորանի ծառով  
ըստաբենարի  
լէ իշխուսայայս .  
այնացն զազա ,  
վաղակի . ամեն ,  
ու նորհի  
հոգուսամենայն  
հիմք : -

զի մարդկան .  
մենուահեռարչ  
լրանի բարեխ  
ողորմանելք , ուն  
ունանեն անյուն  
ու ուժուել  
ու զացնորա .  
ուրածոց . և մեղաց  
նորհեանոցաւ և  
առաեւ են մեջ մեջ , մա  
սշդսիսոյնսիօնի  
մասնաւորաց բնույն  
մասավեցուարտաս  
ուն . հայտնահենայտ  
ու ուսիմութաց ուն  
ու բաշտան . ու ուսիմութաց  
ու ուսիմութաց ուն

ପରିମୁଦ୍ରାବିନୀ  
ଅଧିକାରୀଙ୍କର  
ପରିମୁଦ୍ରାବିନୀ

Նկ. 5. Հովհաննես Արքեպիսկոպոսի դիմանկար  
Տին և Նոր Կոբակարանների գրքերի ժողովածու  
(Մագիստրատուրան, ձեռք. հմք. 4243)



Նկ. 6. Թորոս Սարկավագը Ասթվածամոր և Քրիստոսի տոջե.  
Պարասիկ թերթ (Տոլիվուդ, Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան թեմի  
առաջնորդարան, Հազարյան հավաքածու, ձեռք. հմք. 142)



Նկ. 7. Թորոս Տարոնացու ինքնանկարը.  
1318 թ. Աստվածաշունչ (Մագրենադարան, ձեռք. հմք. 206)



Նկ. 8. Ավագ ծաղկողի ինքնանկարը.  
Ավետարան, Օրբուրազար, 1329 թ. (Մագրենադարան,  
ձեռք. հմք. 7650)



Նկ. 9. Սարգիս Պիծակի ինքնանկարը.  
Աստվածաշունչ, 14-րդ դ. (Մագրենադարան,  
ձեռք. հմք. 2627)



Նկ. 10. Սարգիս Խիզանցու ինքնանկարը  
Աստվածամբ ու Մանկան առջև.  
Աստվածաշունչ, 1390-1400 թվականներ, Խիզան  
(Մագրենադարան, ձեռք. հմք. 346)



Նկ. 11. Մերյու Փյարիսի ինքնանկարը  
Աստվածամբ ու Մանկան առջև.  
Historia Anglorum-Chronica Maiora  
(Բրիտանական թանգարան, Royal 14.C.VII)



Նկ. 12. Շերուն ծաղկողի ինքնանկարը.  
Ավելարան, 1391 թ. (Մագրենադարան, ձեռք.  
հմք. 8772)

մանրանկարները, ի տարբերություն, օրինակ, արևմտյան արվեստից հայտնի ստեղծագործությունների, միայն ծիսական բովանդակություն ունեն կամ առնչվում են Բարեխոսության թեմային:

Միջնադարյան Շկարիչների ինքնանկարների քննության տեսակետից մեծ հետաքրքրություն են Աերկայացնում 1311 թ. Շեր քահանայի ընդօրինակած և Թորոս Սարկավագի ծաղկած Ավետարանից (Մատենադարան, ձեռ. 10859) պոկված այն թերթերը, որոնք ցուցադրում են Թորոս Սարկավագի դիմանկարները: Դրանցից մեկում Դուբլինի Չեսթեր Բիթի գրադարանում (N 559) գտնվող պատառիկ թերթի վրա Աստվածամոր Անջման տեսարանում<sup>140</sup> սարկավագի զգեստ հագած մանրանկարիչը պատկերել է ինքն իրեն որպես տեսարանի մասնակից՝ ձեռքին բռնած բուրվառ և խնկաման<sup>141</sup>: Թորոս Սարկավագի կողքին գրված նրա անունը կասկած չի թողնում, որ մանրանկարիչը պատկերել է ինքն իրեն: Այս անսովոր դիմանկարից բացի Թորոս Սարկավագը ինքն իրեն Աերկայացրել է նաև երկու այլ մանրանկարներում, որոնք զբաղեցնում են միևնույն պատառիկ թերթի (Լու Անջելես, Հայ Եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Սրբամուշ թեմի Առաջնորդարան, Հազարյան հավաքածու, ձեռ. 142. 2ա, բ) տարբեր երեսները: Այդ պատկերներից առաջինը (թ. 142. 2ա) ցուցադրում է Ամեր Դատաստանի թեմային վերաբերող Մեոյալների հարության դրվագը, և այդտեղ մանրանկարիչը Աերկայացրել է ինքն իրեն Աերքսի ձախ անկյունում, ծնկաչոք, ձեռքերը միացրած աղոթելու պահին<sup>142</sup>: Վերևում քերովքների շարքով հաղորդված դրախտից իշխող կապույտ հրեշտակները փող են փչում հարություն տալու համար մանրանկարի ստորին մասում պատկերված մեոյալներին:

Հաջորդ մանրանկարում Թորոս Սարկավագը իրեն պատկերել է Աստվածամոր և Քրիստոսի երկարահասակ կերպարանքների միջև, նրանց ոտքերի մոտ, ծնկաչոք, աղաչական ձևով ձեռքերը Հիսուսին մեկնած (նկ. 6): Աստվածամայրը ձախ ձեռքը որդու կողմն ուղղած խոսքի շարժումով, Աերկայացնում է Թորոս Սարկավագին<sup>143</sup>: Թորոս Սարկավագի այս երեք դիմանկարները անսովոր երևույթ են հայ գրքարվեստի պատմության մեջ: Այս երկերը անպայման պայմանավորված են հայոց շրջանում հայտնված փոքր հայելիների գործածության հետ: 14-րդ դարից մեզ ավելի շատ ինքնանկարներ են հասել, և այդ երևույթը թերևս վկայում է նաև մանրանկարչի կողմից սեփական անձը մի փոքր ավելի կարևորելու հանգամանքի հետ:

Մեզ է հասել Գլանորի համալսարանի հետ առնչվող մանրանկարիչ Թորոս Տարոնացու ինքնանկարը 1318 թ. Աստվածաշնչում /Մատենադարան, ձեռ. 206/, որը խորանի ուղղանկյան կողքին Աերկայացնում է նրան գրելիս կամ Շկարիչիս /թ. 438 ա/<sup>144</sup>: Այստեղ

<sup>140</sup> Տե՛ս F. Macler, Documents d'Art armeniens. De arte illustrandi. Collections diverses, Paris, 1924, pl. CI, fig. 256; S. Der Nersessian, The Chester Beatty Library, A Catalogue of the Armenian Manuscripts with an Introduction on the History of Armenian Art, Dublin, 1958, vol. I, p. 31-32.

<sup>141</sup> Գունավոր վերաբարությունը փե՞ս V. Nersessian, Treasures from the Ark, p. 191.

<sup>142</sup> Գունավոր վերաբարությունը փե՞ս Treasures in Heaven, pl. 22, p. 169.

<sup>143</sup> Գունավոր վերաբարությունը փե՞ս Ibid, pl. 23.

<sup>144</sup> Գունավոր վերաբարությունը փե՞ս Miniature Armenienne, Portrait, Compilation, introduction et commentaires A. Guevorkian, Erevan, 1982, ill. 25; E. Korkhmanian, I. Drampian and G. Hakobian, Armenian Miniatures of the 13<sup>th</sup> and 14<sup>th</sup> Centuries from the Matenadaran Collection, ill. 17.

մանրանկարիչը պատկերել է իրեն միայն կրծքից վերև և կողքից ավելացրել նկարվող մա-  
գաղաթի թերթը կտուցով բռնած սիրամարգի պատկերը (Ակ. 7):

Իր աճափոր, կարելի է ասել՝ անզամ սրամիտ պատկերագրությամբ այս դիմանկարը  
առանձնանում է մանրանկարիչների նախորդ և հետագա շրջանների դիմանկարների մեջ:  
Սա այն հազվագյուտ օրինակներից է, որտեղ հեղինակի հիմնական ուշադրությունը կենտ-  
րոնացված է եղել դեմքի մանրամասները հաղորդելու վրա: Այստեղ ըստ ամենայնի փոքր  
հոնացված է եղել դեմքի մանրամասները հաղորդելու վրա: Այստեղ ըստ ամենայնի փոքր  
նորեն պատկերել իրեն: Կարելի է ասել, որ նա թեև սեփական դեմքը հաղորդելու վրա է  
կենտրոնացրել հիմնական ուշադրությունը, բայց, այդուհանդերձ, բոլորովին չի անտեսել  
մանրանկարի մյուս մասերը:

Արևմտյան արվեստում պահպանված առանձին ստեղծագործությունները թույլ են  
տալիս պատկերացնել, թե ինչպես է արվեստագետը հայելիի օգնությամբ նկարում ինքն  
իրեն<sup>145</sup>:

Թորոս Տարոնացու ինքնանկարը առանձնանում է նախորդ շրջանի հայկական դիմա-  
նկարներից նաև այն պատճառով, որ այստեղ նկարիչը ցույց է տրված իր աշխատանքի  
պահին: Մանրանկարչին ձեռագիրը զարդարելու պահին ներկայացնող հնագույն մանրա-  
նկարներից մեկը ի հայտ է գալիս Վիեննայում պահվող 13-րդ դարի ֆրանսիական, այս-  
պես կոչված, Խրատական Աստվածաշնչի մեջ<sup>146</sup>:

Առ այսօր հայտնաբերված չեն հայ մանրանկարչության այնպիսի նմուշներ, որոնք  
մանրանկարչին ցուցադրեին նկարից նկարը ընդօրինակելու ժամանակ, մինչդեռ 9-րդ  
դարի հունական գրքարվեստում այդպիսի մանրանկար պահպանված է<sup>147</sup>:

Ավելի ուշ շրջանի հայկական աշխատանք է Թորոս Տարոնացուց ոչ պակաս անվանի  
Ավագ ծաղկողի ինքնանկարը՝ ձեռագրը ստացող Ասլանի կողքին ծնկաչոք դիրքով, ձեռ-  
քերը աղոթողի շարժումով վեր բարձրացրած և դեմքը ուղղած Աստվածամորը, որը բարե-  
խոսում է Քրիստոսին Ավագի և պատվիրատուի հոգիների փրկության համար (Ակ. 8): Այս  
մանրանկարը զարդարում է Օրտուբազարի 1329 թ. Ավետարանը /Մատենադարան, ձեռ.  
7650/ և գրադարանում մատյանի ողջ էջը /թ. 25ա/<sup>148</sup>: Այս ինքնանկարը ավելի հիշեցնում է  
Թորոս Սարկավագի ինքնանկարները և նոր բան չի ավելացնում հայ մանրանկարիչների  
դիմանկարների պատկերագրության մեջ:

Բարեբախտաբար, պահպանվել են կիլիկյան մեծ նկարիչ Սարգիս Պիծակի տարբեր  
ժամանակներում վրձնած երեք ինքնանկարները, որոնք իրոք երևույթ են հայ դիմանկար-  
չության մեջ առհասարակ: Դրանցից առաջինը հանդիպում է 1331 թ. Ավետարանում (Վե-  
նետիկ, Միսիթարյան միաբանության գրադարան, ձեռ. 16) և մաս է կազմում Ղուկաս ավե-  
տարանչին ներկայացնող դիմանկարին (193թ)<sup>149</sup>: Այստեղ մանրանկարչն իրեն պատկե-

<sup>145</sup> The Medieval Artist at Work, p. 82, pl. XXXI.

<sup>146</sup> Ibid, p. 42, pl. II.

<sup>147</sup> Ibid, p. 24, pl. XI.

<sup>148</sup> А. Н. Свирип, Миниатюра древней Армении, с. 97-98; Л. А. Дурново, Очерки изобразительного искусства средневековой Армении, с. 266, 270, илл. 161;Գունսվոր վերաբարությունը գրքում Miniature Armenienne, Portrait, ill. 27.

<sup>149</sup> S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, fig. 653, p. 159.

րել է ավետարանչի առաջ ծնկաչոք դիրքով, աղոթելիս, այսինքն՝ նախորդ դարից մեզ հայտնի պատկերագրության համեմատ: Նա սևամեր մորուքով, համեմատաբար երիտասարդ անձնավորություն է:

Ներսես քին. Ներսեսյանը կարծում է, թե Սարգիս Պիծակն այստեղ երեսուն տարեկան է, ինչի հետ դժվար է համաձայնել՝ նկատի առնելով, քանի որ նա, ինչպես տեսանք վերը, 1301 թ. արդեն օգնել է իր հորը՝ Գրիգոր Պիծակին, ձեռագիրը զարդարելու ժամանակ և մանավանդ 1312 և 1316 թթ. ինքնուրույն կերպով երկու մատյաններ ծաղկել: Նկատելի է, որ նրա զլխի զազաթը սափրված է, ինչպես կաթոլիկ հոգևորականների մոտ: Նրա զգեստավորումը այստեղ բաղկացած է պարեգուտից և թիկնոցից: Զարմանալի է, որ նա ինքն իրեն ներկայացրել է լուսապատճենով: Նրա զլխի երկու կողմերից ընթեռնելի է «Սարգիս» մակագրությունը:

Երկրորդ դիմանկարը գտնվում է ճշգրիտ թվական չունեցող 14-րդ դ. Աստվածաշնչի (Մատենադարան, ձեռ. 2627) մեջ (թ. 422թ): Այստեղ նկարիչը ինքն իրեն պատկերել է նստած դիրքով գրելիս<sup>150</sup>: Այս նկարը իր բնույթով առանձնանում է մինչ այժմ քննված բոլոր՝ դիմանկարներից, որովհետև հեղինակը առանձին նկարի մեջ ներկայացրել է բացառապես իրեն, նստած և գրելու կամ նկարելու պահին: Տարակուս չկա, որ ստեղծագործության հեղինակը վաստակավոր մանրանկարիչն ինքն է, քանզի պատկերի շրջանակի վերսկի հատվածում գրված է «Սարգիս երեց շինել», այսինքն՝ Սարգիս քահանան է նկարողը (Ձկ. 9):

Դիմանկարի այս պատկերագրությունը հեղինակին թույլ է տվել որոշակի ուշադրություն հատկացնելու սեփական դիմագծերի հաղորդմանը: Սարգիս Պիծակը այստեղ արդեն սպիտակամեր մորուքով միջին տարիքի տղամարդ է («ալեհեր ծերունի» Ա. Ն. Սվիրինի բնորոշմամբ)<sup>151</sup>: Ուշադրություն է գրավում նրա՝ բերեստի նմանվող գեղեցիկ զլխարկը, որը, մեր համոզմամբ, անկասկած իտալական ծագում ունի և տեսանելի է նույն ժամանակի իտալական արվեստի տարբեր ստեղծագործություններում<sup>152</sup>: Հավանորեն այն իտալացի գործնկերների հետ շփվելու արդյունք է: Այս դիմանկարը փաստորեն նոր խոսք է հայ միջնադարյան ինքնանկարի արվեստում, քանի որ չի կրկնում իրենից առաջ ստեղծված մյուս ինքնանկարների պատկերագրությունը: Այստեղ ևս, անկասկած, մանրանկարիչը ըստ ամենայնի օգտվել է փոքր հայելիից՝ իր դեմքը մանրամասնորեն ներկայացնելու համար:

Կասկածից վեր է, որ խնդրո առարկա անթվակիր ձեռագրի դիմանկարը Սարգիս Պիծակի կերպարը միջին տարիքում արձանագրելու պատճառով միշանկյալ դիրք է գրավում առաջին և երրորդ ինքնանկարների միջև: Երրորդ դիմանկարը թվագրվում է 1342 թ. և մաս է կազմում այդ տարին ծաղկված Ավետարանի (Դուբին, Չեսթեր Բիթի գրադարան,

<sup>150</sup> A. H. Свирин, Миниатюра древней Армении, с. 75, 80; Գունավոր վերաբարությունը փեն Miniature Armenienne, Portrait, ill. 33; S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, fig. 652, p. 159.

<sup>151</sup> A. H. Свирин, Миниатюра древней Армении, с. 75, 80.

<sup>152</sup> E. Pirani, La miniatura gotica, Milano, 1966, p. 73, ill. 32.

ձեռ. 614) նկարագրումների (թ. 13բ)<sup>153</sup>: Այստեղ Սարգիս Պիծակը իրեն նկարել է պատկերի աջ կողմում, զարի վրա նատած, Քրիստոսի կողքին ծնկաչոք աղոթելիս: Մանրանկարչի կերպարանքը իր չափերով շատ չի զիջում Քրիստոսին:

Համեմատաբար մեծ չափերով ցուցադրված լինելու շնորհիվ նկարչի դիմագծերն ավելի լավ են ներկայացված: Նա այս դիմանկարում արդեն հասակն առած սպիտակամորու, ինչ լավ են ներկայացված: Նա այս դիմանկարում արդեն հասակն առած սպիտակամորու, ինչ լավ են ներկայացված: Ա. Ն. Սվիրինը գտնում է, որ 1352 թ. ձեռագիրը ծաղկելիս Սարգիս գիշին արդեն վաթուն տարին անց էր<sup>154</sup>. Գլխին նոյն իտալական գլխարկն է և թիկնոցն ամուր կոճկված կրծքի վրա: Նոյն ծնկաչոք աղոթելու դիրքով նա ձախից ցուցադրել է մատյանի պատվիրատու Տիրացուին: Սարգիս Պիծակը սեփական անունն է արձանագրել իր կերպարանքից ոչ հեռու՝ շրջանակի վրա թողած մակագրության մեջ և սիմետրիկ ձևով Տիրացուի անունը՝ Վերջինիս կողքին շրջանակի վրա: Այս մանրանկարով հեղինակը շարունակում է հայ գրքարվեստի մեջ պատվիրատուին ու մանրանկարչին կողք-կողքի ծնկաչոք աղոթելիս ցուցադրող պատկերագրության, որը 14-րդ դարից սկսած բավականին հաճախ ի հայտ է գալիս նախորդ և հաջորդ դարերի հայ ծաղկողների գործերում:

Շնորհիվ Սարգիս Պիծակի այս երեք դիմանկարների, հնարավոր է դառնում ոչ միայն ըստ ամենայնի գաղափար կազմել հայ մեծանուն երփնագրողներից մեկի իրական դիմագծերի վերաբերյալ, այլև նկատել, որ նրա ծաղկած մատյանների գրեթե բոլոր Տերունական թեմաներով ներկայացված մանրանկարների աստվածաշնչական կերպարների դեմքերին հիմնականում դրոշմված են իր դիմագծերը: Սա մի զարմանալի երևոյթ է, որ երբեմն նկատելի է անգամ մեր ժամանակի նկարիչների աշխատանքներում: -

Սարգիս Պիծակի վերջին դիմանկարի պատկերագրությունն ունեցող երկերի թվին է պատկանում Սարգիս Խիզանցու ինքնանկարը Հովհաննես Շարունու հետ Աստվածամոր ու մանկան առաջ ծնկաչոք աղոթելիս (Ակ. 10): Այդ պատկերը հանդիպում է Խիզանում ստեղծված 1390-1400 թվականների Աստվածաշնչում (Մատենադարան, ձեռ. 346) և զբաղեցնում է էջի մի հատվածը (թ. 440ա)<sup>155</sup>: Այս մանրանկարը զարմանալիորեն հիշեցնում է 13-րդ դարի անգլիացի մանրանկարիչ Մեթյու Փյարիսի ինքնանկարը՝ Աստվածամոր ու մանկան առաջ ծնկաչոք աղոթելիս նրա ծաղկած մատյաններից մեկում (Բրիտանական թանգարան, Royal 14. C. VII)<sup>156</sup> (Ակ. 11): Չի բացառվում, որ այս վարպետի աշխատանքները հայ ծաղկողներին հայտնի լինեին դեռևս խաչակրաց շրջանից: Զարմանալի է, բայց փաստ, որ Մեթյու Փյարիսը իր գրվածքներում պատմում է Անգլիա եկած հայ ուխտավոր վանականների հետ ունեցած շփումների ու գրուցների մասին ու հիշատակում Հայաստանը և Նոյյան տապանը<sup>157</sup>:

<sup>153</sup> S. Der Nersessian, The Chester Beatty Library, vol., p. 184, pl. 614; idem, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, fig. 654, p. 159. Գունավոր վերաբարպությունը լինելու Miniature Armenienne, Portrait, ill. 32. V. Nersessian, Treasures from the Ark, ill. 124, p. 192-193.

<sup>154</sup> A. H. Свирин, Миниатюра древней Армении, с. 81.

<sup>155</sup> Գունավոր վերաբարպությունը լինելու Miniature Armenienne, Portrait, ill. 42.

<sup>156</sup> D. Diringer, The Illuminated Book, its history and production, London, w. d., p. 270, fig. V-13b; J. Backhouse, VI Devotions and Delights, p. 77.

<sup>157</sup> H. C. Evans, Manuscript Illumination at the Armenian patriarchate in Hromkla and the West, Ph.D. dissertation, Institute of Fine Arts, New York University, 1990, p. 140-141.

14-րդ դարի մանրանկարիչների դիմանկարներից պահպանվել են Վասպուրականի հայտնի մանրանկարիչ Շերուն Շաղկողի երեք ինքնանկարները: Դրանցից առաջինը մաս է կազմում 1391 թ. Ավետարանի (Մատենադարան, ձեռ. 8772)<sup>158</sup>, երկրորդը՝ 1395 թ. Ավետարանի (Սամկո-Պետերբուրգ, Պետական Էրմիտաժի հավաքածու, ձեռ. VP-1010) ձևավորման (թ. 11ա)<sup>159</sup>, իսկ երրորդը զարդարում է Մատենադարանում պահվող պատահիկ ձեռագրերից մեկը (պատահիկ 1101)<sup>160</sup>: Այս մանրանկարներից ավելի հայտնի է և հաճախ հրատարակվել է Շերունի առաջին ինքնանկարը<sup>161</sup>: Այն ցուցադրում է Շերունին թղթի թերթի վրա անվանաթերթ նկարելու պահին<sup>162</sup>: Մանրանկարչի՝ ինքն իրեն պատկերելու ձևը առանձնացնում է դիմանկարը նախկինում ստեղծված ինքնանկարների շարքում, քանի որ նա զբաղված է այդտեղ իր բուն գործով՝ մազադարելով (Ակ. 12):

Այս մանրանկարչի ինքնանկարի պատկերագրությունը կարծես իր ազդեցությունն է թողել Աստվածատոր Շաղկողի ինքնանկարի (թ. 8ա) վրա Արճեշի (Վասպուրական) 15-րդ դ. Ավետարանում (Մատենադարան, ձեռ. 4867)<sup>163</sup>: Այստեղ նույնպես մանրանկարիչը ցուցադրում է իրեն թղթի թերթը ծաղկելու պահին: Դժվար է ասել, թե արդյոք այս երկու մանրանկարիչներին ծանո՞թ են եղել նախորդ դարերում ստեղծված համանման արևմտյան ստեղծագործությունները, որոնց մասին խոսվեց վերը:

15-րդ դարի մանրանկարիչների դիմանկարների մասին զաղափար կազմելու առումով հիշարժան է նաև Տփղիսում աշխատած Մանուելի ինքնանկարը: Այն զարդարում է 13-րդ դարի կիլիկյան Ավետարանը (Մատենադարան, ձեռ. 5784), որը 1445 թ. եղել է Թիֆլիսում: Մանուելը ինքն իրեն ցուցադրել է այդ ձեռագրի լուսանցքներից մեկում (թ. 2բ) ծնկաչոք աղոթելիս<sup>164</sup>, այսինքն՝ այն պատկերագրության համեմատ, որը հայտնի էր նախքան Սարգիս Պիծակի դիմանկարների երևան զալը:

Սարգիս Պիծակի վերջին դիմանկարի պատկերագրությունը հիշեցնող երկերի թվին է պատկանում, օրինակ, 17-րդ դարում ստեղծագործած հայ լավագույն մանրանկարիչներից Հայրապետի ինքնանկարը՝ իր պատվիրատու Գրիգորի նետ խաչի առաջ ծնկաչոք աղոթելիս: Ահեղ Դատաստանի թեման ներկայացնող այդ պատկերը հանդիպում է 1655 թ. Սպահանում ստեղծված Ավետարանի (Դուբլին, Չեսթեր Բիթի գրադարան, ձեռ. 578)

<sup>158</sup> Գունավոր վերաբարությունը լին Miniature Armenienne, Portrait, ill. 43;

<sup>159</sup> Т. А. Иzmайлова, Армянские иллюстрированные рукописи Государственного Эрмитажа (Каталог). Труды Государственного Эрмитажа, т. 10, Ленинград, 1969, с. 119.

<sup>160</sup> Հ. Հ. Նակորյան, Վասպուրականի մանրանկարչությունը, գիրք Բ, լ. 52-65:

<sup>161</sup> Л. А. Дурново, Очерки изобразительного искусства средневековой Армении, с. 271, 273, 277, илл. 166; Г. Г. Акопян, Миниатюры Васпуракана XIII-XV веков, Ереван, 1989, с. 51-53, 73-76; L. Chookaszian, Cerun Stepanossi. Saur Allgemeines Kunstlerlexikon, Munchen- Leipzig, Bd. 17, 1997, S. 614.

<sup>162</sup> А. Н. Свирин, Миниатюра древней Армении, с. 112-114; L. A. Durnovo, Miniatures armeniennes, Paris, 1961, р. 160, пл. 161; Н. Накобян, Tzerun, Editions Erebouni, 1984.

<sup>163</sup> Գունավոր վերաբարությունը լին Miniature Armenienne, Portrait, ill. 62.

<sup>164</sup> А. Н. Свирин, Миниатюра древней Армении, с. 70; Գունավոր վերաբարությունը լին Miniature Armenienne, Portrait, ill. 56.

Ակարազարդումների (թ. 15բ) շարքում<sup>165</sup>: Այստեղ խաչի թևերի անկյուններից փողիարող հրեշտակներն ազդարարում են Ամեղ Շատաստանի գալուստը, և խաչափայտի կենտրոնում նստած դիրքով ներկայացված է պատանի Քրիստոսը: 16-17-րդ դարերում տարածված այս պատկերի մեջ, ներքեւում, հաճախ ներկայացվում են մանրանկարիչն ու պատվիրատուն: Թվում է, թե դիմանկարի այս պատկերագրությունը հեղինակին թույլ չի տալիս որոշակի ուշադրություն հատկացնելու սեփական դիմագծերի հաղորդմանը, և դրա պատճառը ոչ միայն կերպարանքների փոքր չափերն են, այլև կենտրոնացումը այլ բաղկացուցիչ մասերի վրա:

Չպետք է բոլորովին բացառել, որ առանձին հայ ծաղկողներին կարող էին հայտնի լինել արևմտյան մանրանկարիչների դիմանկարները, և դրանք կարող էին որոշ ազդեցություն գործել հայկական ինքնանկարների պատկերագրության ձևավորման գործում: Առհասարակ ուշագրավ է գեղարվեստական նմանօրինակ երևույթների գրեթե միաժամանակ կամ ժամանակային փոքր տարբերությամբ հայտնվելը և՝ հայ, և՝ արևմտյան արվեստում: Աճշուշտ մեկ հոդվածի սահմաններում հնարավոր չեն նույթան առնել հայ մանրանկարիչների բոլոր մեզ հասած ինքնանկարները, քանի որ նախ և առաջ բազմաթիվ ստեղծագործություններ դեռևս առհասարակ ուսումնասիրված չեն:

Նմանապես անկարելի է այստեղ ուշադրության առնել միջնադարյան հայ մանրանկարիչների կյանքի ու գործունեության մյուս պարագաները: Հայ արվեստի երկերի մասին գալիք աշխատությունները հավանաբար կրացահայտեն տակավին մութ մնացած անթիվ այլ խնդիրներ, և գիտնականները հայ մանրանկարիչների արվեստանոցների և դրանց առնչվող շատ ու շատ երևույթների վրա կսկսեն նայել միանգամայն այլ հայացքով:

<sup>165</sup> Գուեավոր վերապայությունը գլւխ V. Nersessian, Treasures from the Ark, ill. 128, p. 15, 193-194.